

# ԱՎԵԴԱՊԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

The Weekly **AVEDAPER**, American Bible House, Constantinople.

ՀԱՏՈՐ ԿԵ

Կ. ՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 30, 1912

ԹԻՒ 13



ԱՆԱԹՈԼԻԱ ԳՈԼԷՃԻ «ՆՈՐԹ-ԳՈԼԷՃ» ՇԵՆՔԸ  
(ՏԵՍ ԷՋ 307)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈՐԻՋՈՆԸ. Հնդիկ Մահմեդականներ եւ Կայս. բաղաբականութիւն, Հնդկաստանի մարդահամարը :

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Արդիական զէնքեր :

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ. Թափուր :

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ. Օգտակար ու մնասակար մանրէները :

ՅՕԳՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ. Կամոյիկ եկեղեցիին մէջ իրկուսն մը, Գերմանացի Հայասէրները, Հաւատքի արդի դիւցազունները, Օսմանիէի «Յիշատակարան Եկեղեցի»-ին համար նպաստներ, Նիկոմիդիոյ Գաւառ. Ժողովը, Հայ կեանքը, Մեր պատկերը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ



### ՀՈՐԻԶՈՆԸ

ՀՆԴԻԿ ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՆԵՐ ԵՒ ԿԱՅՍ. Ժամանա-  
 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԻՓԻԻՆ ԿԷ՛ ԴԵ Է  
 վեր յայտ-  
 նի է թէ Հարա-արեւելեան Եւրոպայի և Միջին  
 Արեւելքի զէպքերու ընթացքը ծանր վրդովում կը  
 պատճառէ Հնդկ Մահմետական աշխարհի մէջ:  
 Տրիպոլի պատերազմին և Պարսկաստանի վրայ ու-  
 բոշումներ տրուեցան Հնդկաստանի ամէն կողմը  
 Մահմետականներու հանրային զուժարումներու  
 մէջ, նաեւ անոնց հանդէպ համակրանքի նշանաւոր  
 արտայայտութիւններ կը տեսնուին յաճախ Մահ-  
 մետական մամուլին մէջ: Եթէ վերու ծուրի Տրի-  
 պոլի և Պարսկաստանի զէպքերէն յառաջ եկած  
 զժգոհութիւնը, կը կարծենք թէ զայն հիմնուած  
 պիտի գտնենք ոչ այնչափ մասնաւոր գոնգատ-  
 ներու որչափ սա ընդհանուր զգացման վրայ թէ  
 Մահմետականներու շահերը և զգացումները բա-  
 ւական ինտամով ի նկատ չեն անուրի Կայս. քա-  
 ղաքականութեան ծրագրին մէջ թէ՛ ի Հնդկաստան,  
 թէ՛ ալուր: Ուրիշ Հնդկ ժողովուրդներ, կրնայ  
 ըսուիլ, ուշադրութիւն գրաւած են հանրային  
 շարժման մեթոտներով որոնք անհաճոյ են Մահ-  
 մետականներուն: Եթէ Մահմետականներ կ'ուզեն  
 նոյնչափ ուշադրութիւն հրաւիրել իրենց տեսա-  
 կէտներուն վրայ, աղէկ կ'ըլլայ որ քիչ մը աւելի  
 յարձակողական դիրք բռնեն՝ զանոնք աշխարհի  
 ներկայացնելու համար: Մենք ընտել ենք հաւա-  
 տար թէ այսպիսի խօսքեր ունէ ընդունելութիւն  
 կը գտնեն աւելի լայնամիտ և զարգացած Մահ-  
 մետականներու կողմէ: Սակայն կը կարծենք թէ  
 այսպիսի խօսքերու ազդեցութեան հետք կարելի  
 է գտնել անոնց նուազ փորձառու կրօնակիցներուն  
 մանաւանդ երիտասարդներուն վերջին արտայայ-  
 տութիւններէն ռմանց մէջ: Օրինակի համար կ'ե-  
 բուի թէ ազդեցութիւն բրած են անցեալ շարժու-  
 կալկաթայի մէջ գումարուած Համայն Հնդկաս-  
 տանի Մահմետական Բաշնակցութեան տարեկան  
 ժողովին արարքներուն վրայ, և թերեւս չափով  
 մը կը բացատրեն թէ ինչո՞ւ Մահմետական աշ-  
 խարհի վերաբերեալ այլազան խնդիրներու վրայ  
 այնքան բազմաթիւ որոշումներ տրուեցան թէ՛  
 Լոնտոնի, թէ՛ Հնդկաստանի մէջ գումարուած հան-  
 րային ժողովներու մէջ: . . .

Տրիպոլի և Պարսկաստանի զէպքերէն յառաջ  
 եկած անձկութեան ու զայրոյթի զգացումները  
 տարբեր պատճառ ունին: Մեծ աէրութիւններու  
 բովանդակ կարգին մէջ չկայ մէկը որ Անգղիակա-

նին չափ չան ունենայ Մահմետական շահերու  
 պաշտպանման մէջ: Եւ մենք երբեք թերացած չենք  
 պնդել թէ, ըլլայ Եւրոպայի մէջ, ըլլայ Միջին Ա-  
 րեւելքի մէջ, Անգղիոյ արտաքին քաղաքականու-  
 թեան վարիչները միշտ մասնաւոր կարեւորու-  
 թիւն ընծայելու են Մահմետական աշխարհի հան-  
 րային զգացման Հնդկ Մահմետականները ունէ  
 իրական պատճառ ունին՝ կարծելու թէ մեր աշ-  
 խարհավարութեան վերջին ընթացքը սովորակա-  
 նէն նուազ յարգանք ցոյց կու տայ իրենց ամէնէն  
 կարեւոր շահերուն հանդէպ: Լիովին կը հասկնանք  
 մենք խորին այն վիշաք-սրով անոնք մահիկը ա-  
 րեւմտեան աէրութեան մը կողմէ յարձակման են-  
 թարկուած տեսան դարձեալ Օսմ. պետութեան  
 ուրիշ նահանգի մը մէջ: Աւելի լիովին կը հաս-  
 կընանք անոնց սա իրճը, որ մեր ալ իրճն է, որ  
 իրենց Պարսիկ կրօնակիցները իր ամբողջութեամբ  
 պահպանեն կեանքի համար պայքարող Մահմետա-  
 կան պետութիւն մը: Անգղիական աշխարհավա-  
 րութիւնը թերեւս ընտրած չէ միշտ այդ նպատա-  
 կին հասնելու լաւագոյն ու անմիջական մեթոտ-  
 ները: Բայց երբեք տարակուսելի ըլլալու չէ իր  
 այդ նպատակին անկեղծութիւնը: Անբաւական տե-  
 ղեկութիւնը միայն, միանալով Պարսկաստանի կա-  
 ցութեան զժուարութիւններուն վրայ անկատար  
 քաղաքի մը հետ, կրնայ արդարեւ բացատրել  
 այն կասկածները զորոնք Հնդկի բազմաթիւ Մահ-  
 մետականներ կ'զգան Անգղիոյ ընթացքին նկատ-  
 մամբ: Եւ կ'ուրախանանք իմանալով Պոմպոյի մեր  
 թղթակցէն թէ մեր քաղաքականութեան մեծ զու-  
 շաւորութիւնը վերջապէս սկսած է շահիլ այն  
 գնահատուած որու արժանի է: Հիւսիսային Պարս-  
 կաստանի Ռուս զօրաց մեկնումը, որ սկսած է  
 և այն տնօրինութիւնները զոր մենք պիտի ընենք  
 հարաւակողմի անեւտրական ապահովութիւնը վե-  
 րահաստատելու համար, կը յուսանք թէ պիտի  
 փարատեն մնացեալ ամէն տարակոյտ: Տրիպոլիան  
 խնդրին ի հարկէ մենք նուազ կը հետաքրքրուինք:  
 Ոչ Անգղիա և ոչ ուրիշ սեւէ աէրութիւն կրնայ  
 իր գրացիները երաշխաւորել իրենց արարքներուն  
 անխուսափելի հետեւանքներուն դէմ, և երբեք տա-  
 րի առաջ Պոսնա-Հէրաէլի խնդրին մէջ Օսմ. շա-  
 հերու համար Անգղիոյ կողմէ ի գործ դրուած ջան-  
 քերը այնչափ չզնահատուեցան որ նոյնպիսի փոր-  
 ճի մը կրկնումը քաջալերուէր: Բայց թէ և մեր  
 զիւստազիտութեան ներկայացած պատեհութիւն-  
 ները ժամանակ ժամանակ կը տարբերին հարկաւ  
 իր ընդհանուր նպատակը բաւական պարզ է: Բան-  
 զի թէ և Օսմ. պետութեան ներքին վերածնումը



միմիայն իր ճիգերէն կախում ունի, 1908ի յեղափոխութիւնը վկայ է թէ Անգղիացիները ո՛րքան խոր ու անկեղծ համակրութեամբ կը վերաբերուին նոր իշխման յաջողութեան հետ: Արդարեւ տարօրինակ լան պիտի ըլլար, եթէ Անգղիական զգացումը այսպէս արամադրուած չըլլար, վասն զի Անգղիական և Օսմանեան երկու տէրութիւնները հասարակաց այնպիսի հանգամանքներ ունին, զորս չունին աշխարհի ուրիշ պետութեան հետ: Մենք ոչ միայն մասնաւորապէս կը շահագրգռուինք Մահմեդական դրութեան ուր որ կայ այն, այլեւ արեւմտեան բոլոր տէրութիւններուն մէջ միակն մը որ Օսմ. պետութեան ցեղային ու կրօնային մեծ ալրազանուութեան նման և թերեւս անկէ գերազանց լան մը ունինք կառավարելու: Հնդկի Մահմետականներ կրնան երբեմն զգալ թէ Անգղիական քաղաքականութիւնը իր բազմազիմի շահերով ենթակայ է անտեսել իրենց զգացումները և իրաւունքները: Սակայն աւելի խորաթափանց զննութեամբ պիտի տեսնեն թէ Անգղիական և Մահմետական շահեր անբաժան կերպով իրարու խառնուած են: Վասն զի թէև Մահմետական իշխանութեան անւսկանութիւնը չկրնար Անգղիոյ կամ ուրիշ ուրիշ օտար պետութեան կողմէ երաշխաւորուել Օսմ. կամ Պարսիկ սահմաններուն մէջ, Անգղիոյ ոյժը միայն կը պահպանէ այն պայմանները որոնց մէջ Մահմետական իշխանութիւնը կրնայ գեղ շարունակել, մինչդեռ Անգղիոյ տկարութիւնը պիտի փութացնէր անոր անխուսափելի անպարտման թայտ (Մարտ 16)

**ՀՆԻՎԱՍՏԱՆԻ ՄԱՐ-** Գեղարուեստի Արքուեի Ընդհանուր Կերակրութեան Հնդկական ճիւղի մէկ զուեւորման մէջ անցեալները կարգացուցաւ Հնդկաստանի մարզահամարի գիւղական պետ Մր. Է. Կէյթի կողմէ պատրաստուած գրութիւն մը, որու նիւթն էր Հնդկաստանի Մարդահամարը: Ահաւասիկ այդ գրութեանէն հատուած մը: Հնդկաստանի ամբողջ բնակչութիւնն է հիմա 315,000,000, որու երեք չորրորդը կը գտնուի Բրիտանական և մէկ չորրորդը ինքնօրէն երկիրներու մէջ, Բնակչութեան միջին խտութիւնն է 175 առ մէկ մի քառ. մղոն: Բայց տեղային շատ զանազանութիւններ կան սկսեալ 900է, և աւելի իսկ քան 900է, Պենկալի քանի մը նպաստաւոր կողմերը մինչև և նուազ քան 50 ի Պիրմա, Բաշմիր և ուրիշ կողմեր: Պելուճիստանի մէջ՝ միայն 6 անձ կայ առ մէկ մի քառ. մղոն, 1872ին բնակչութիւնը 53 առ հարիւր աւելցաւ, բայց պատճառն էր մասամբ յաւելում նոր երկիրներու և աւելի ճշտութիւն նոր

թուարկումներու: Բրիտանական հողը վերջին տասը տարիներուն մէջ 5.5 առ հարիւր աւելցաւ, մինչ բնիկ պետութիւններունը 13 առ հարիւր աւելցաւ: Բայց վերջիններէն ոմանք ծանր կորուստ կրեցին նախորդ տասնամեակի սովերէն: Կալիֆթա իր արուարձաններով և Հոլանդիոյ ունի հիմա գրեթէ 1 1/2 միլիոն բնակիչ, կամ տասնամեակի մը մէջ 10 առ հարիւր յաւելում մը: Պուպայ, գրեթէ մէկ միլիոն բնակչով, յոյց կու տայ 26 առ հարիւր յաւելում մը, Հայտէրապատ 12 առ հարիւր և Ռանկուն 19 առ հարիւր: Մատրասի բազմամարդութիւնը գրեթէ կայուն վիճակի մէջ է, իսկ Գարաչի բազմամարդութիւնը 30 առ հարիւր աւելցաւ և Տաքքայինը 21 առ հարիւր: Հնդկները ամբողջ բնակչութեան առ հարիւր 69 կազմելով հանդերձ վերջին տասնամեակի զուտ յաւելումին մէջ կէս բաժին ունին միայն: Սակայն զխառնրապէս իրենց ընկերային սովորութիւններուն և մասնաւորապէս որքեւարիներու ամուսնութեան ընդհանուր արգելքին պատճառով բազմատարար յամր եղաւ իրենց անման բնական ընթացքը: Բրիտանականներու թիւն է հիմա գրեթէ 4 միլիոն, որ մէկ միլիոնի յաւելում մը կը ցուցնէ տասը տարուան մէջ: Կարգալ գրելի գիտցողներու թիւը այդ տասնամեակին մէջ բարձրացաւ հազարին 98 արուէն և 7 էրէն 106ի և 11ի: Իւրաքանչիւր հարիւր հազարեակի մէջ կը գտնուին 26 յիմար, 64 խուլ-համր, 142 կոյր և 35 բորոտ:

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

ԱՐԳԻԱԿԱՆ ՁԷՆՔԵՐ  
Հ. Ս. Պ.

**ՉԻՆՈՒՌԱԿԱՆ** յօդուած մը պիտի չգրենք և կատարելագործուած հրազեններու կամ նորահնար զօրեղագոյն պայթուցիկներու վրայ պիտի չխօսինք: Ձէնքերը որոնց վրայ կ'ուզենք խօսիլ՝ ճարտարական մարտերու մէջ գործածուածներն են: Արդի ժամանակներու փոփոխուած պայմաններէն ծագում առած են անոնք: Եօթնասունըճիսդ և նոյն իսկ յիսուն տարի առաջ զէնքերը հազիւ հազ կ'երեւակայուէին: Այն ժամանակ ամէն մարդ առ հասարակ իր անձնական կօչկակարն ունէր, որու կը դիմէր երբ նոր դոյդ մը կօչկի պէտք ունենար և կարել կու տար: Շատ երկիրներու մէջ այս վիճակը դադրած է գրեթէ ամբողջովին: Կօչկի անաղին վործարաններ կան որ կատարելագործուած մեքենաներ կը գործածեն և երբեմն հարիւրաւոր գործաւոր կը բանեցնեն ու կրնան սոսկական կօչկակարներու հետ բազաւտ



մամբ շատ ատան ծախել ու դարձեալ լաւ շահ մը ապահովել և Նմանապէս սոսկական գործասեղանին յաջորդած են բամբակեղէնի և բրդեղէնի խոշոր գործարաններ, և պողպատեայ մատներ մարդու ձեռքերու երբեմնի գործը կը կատարեն մարդկային առաջնորդութեան տակ : Այս պատճառով ճարտարուեստով զբաղողները աւելի կատարեալ կերպով բաժնուեցան գործատէր և գործաւոր դասակարգերուն : Այդ փոփոխութիւնը այնքան լիովին տեղի ունեցած չէ այս պետութեան մէջ որքան ուրիշ շատ երկիրներու մէջ : Բայց երբ Թուրքիա երկաթուղիի ցանցերով ծածկուի, երբ իր նվաճական հարստութեան զորութիւնները լիովին շահագործուին, և երբ զրամատէրեր յօժարին մեծ գումարներ գործի լծակել, այն ժամանակ անխուսափելի կը դառնայ այն փոփոխութիւնը : Այդ կարելիութիւնը այնչափ ստոյգ է հոս որչափ ուրիշ ունէ տեղ, միակ տարբերութիւնը կը կայանայ սկզբնաւորման ժամանակին մէջ :

Չէնքերը որոնց վրայ պիտի գրենք՝ նոր պայմաններուն հետ մաքառելու համար հնարուած են Գործաւորի և գործատէրի երկու բանակները, որոնց կը բաժնուի ճարտարագործ աշխարհը, կըրնան խաղաղ ու բարեկամական յարաբերութիւններու մէջ գտնուիլ երկու կառավարութիւններու նման, կրնան ալ պատերազմ մղել իրարու դէմ : Եւ պատերազմի ժամանակ այս զէնքերը կը գործածուին :

Մին է պոլսոյ կոչուածը : Այս զէնքին գործածումն սկսաւ 1880ին Իրլանտայի մէջ : Հոն հողին մեծ մասը հարուստ հողատէրերու կը պատկանի, որոնք մասերու կը բաժնեն զայն և վարձու կուտան : Այդ հողատէրերուն մէջ կար Պոլքոթ անուանով հարիւրապետ մը, որու վարձակալները միանալով պահանջեցին որ ընդունի իր արտերը վարձու տալու այն զիւրազոյն պայմանները զորոնք իրենք առաջարկած էին : Մարդը չընդունեցաւ : Այն ժամանակ վարձակալները անոր դէմ միաբանեցան, բռնի ուժով հեռացուցին անոր ծառաները և անտէր, անխնամ թողուցին անոր հունձքերը : Շրջականերէն ոչ ոք յանձն առաւ գործել անոր համար : Յիսուն մարդիկ եկան Իրլանտայի հիւսիսային կողմէն, և քաղցին անոր հունձքը, բայց 900 զինուոր հարկ եղաւ զանոնք պաշտպանելու համար : Այն օրէն ի վեր տնտեսական մարտը կը կոչուի անունովն այն մարդուն, որու դէմ մղուեցաւ առաջին անգամ :

Այն օրէն ի վեր արագ տարածուեցաւ պոլքոթը, վասն զի շատ արդիւնաւոր զէնք մը հանդիսացաւ :

Նոյն տարուայ Թոյմ լրագիրը սապէս ըսաւ : «Պոլքոթել կը նշանակէ թէ խաղաղ քաղաքացիի մը ու տելիք ու խմելիք կը զլացուին, գործը կը կործանուի և արջառը անվաճառելի կ'ըլլայ շուկային մէջ : Պայտարը չպայտեր անոր ձին, կահագործը չնորոգեր անոր կառքը, հին բարեկամներ կ'անտեսեն զայն, և ճամբուն միւս կողմը կ'անցնին խաչակնքելով, զաւակները կը ծաղրուին իրենց դպրոցական ընկերներէն և եկեղեցիին մէջ ամէն ուրիշներէ զատ կը նստի դասակարգերէ վտարուածի մը պէս » : Ոչ միայն մարդիկ չեն ուղեր անոր հետ առետուր ընել, այլ և անոր հետ առետուր ընել համարձակողներ եւս կը հալածուին նոյնպէս և կը կործանուին : Ծանօթ են այնպիսի դէպքեր, ուր պոլքոթի ենթարկուած մարդու մը զեղ զլացուեցաւ հիւանդ զաւկին համար, ուր քահանայն սպառնալիք կրեց անոր հիւանդը այցելելուն համար և ուր ոչ ոք գտնուեցաւ անոր մեռեալին համար գերեզման փորող :

Այս ձեռնարկին ուղիղ կամ ծուռ ըլլալուն վրայ գրելէ առաջ կ'ուզենք ճարտարական ուրիշ զէնք մը յիշել, որ է Գործաւոր : Այս բառը կը սահմանուի իրբեւ գործաւորներու համաձայնութիւն մը իրենց աշխատութեան պայմաններուն մէջ փոփոխում մը ձեռք բերելու կամ փոփոխման մը դիմադրելու նպատակով : Երկու բառ կը գործածուին ծագած անհամաձայնութեան զորութիւն համեմատ իթէ գործաւորները օրավարձի յաւելում կը պահանջեն և գործատէրերը չեն հաւանիր, այն ժամանակ գործաւորները կը դադրին գործելէ : Այս կը կոչուի գործադուլ կամ բանթոլ : Եթէ գործատէրերը կորոշեն տրուած օրավարձը գեղջիկ և գործաւորները չեն հաւանիր, այն ժամանակ գործատէրերը կը փակեն գործարաններուն կամ հանքերուն դռները մինչեւ որ գործաւորները հաւանին զեղջեալ օրականով գործել : Այս կը կոչուի փակում կամ հակարանթոլ :

Ըսինք թէ գործադուլը արդիական զէնք է : Այսու ամենայնիւ 171 կամ 172 տարի առաջ 1740ին կամ 1741ին Նիւ Եորքի հացագործները գործադուլ ըրին և մերժեցին հաց եփել մինչեւ որ իրենց թոշակը չաւելցաւ : Բայց զխաւորապէս շատ վերջերս է որ գործադուլը գործածուեցաւ : Պաշտօնական վիճակագրութիւններէ կը տեսնուի թէ 1891էն մինչեւ 1900 Մեծ Բրիտանիոյ գործադուլներուն տարեկան թիւը 648ի և 929ի մէջ կը տարուբերէր, բանթոլներու թիւը 230,000ի և 636,000ի մէջ, իսկ աշխատութեան կորուսեալ օրերու թիւը 2½ միլիոնի և 31 միլիոնի մէջ :



Բայց բոլոր այս թիւերը մեծապէս կը նսեմանան յետագոյն տարիներու թիւերուն քով, մասնաւանդ Անգղիոյ արդի մեծ գործադուլին ժամանակ: Թայմի Մարտ 18 թուով հրատարակուած տեղեկագրին համաձայն հանքերու մէջ գործող բանթողներու թիւն է 849,800, հանքերէն դուրս գործող բանթողներունը 203,700 և ուրիշ ճարտարութիւններու մէջ անգործութեան դատապարտուածներունը 492,200, համագումար 1,545,700: Ոչ միայն հանքագործները անգործ են, այլ և գործաւորներն այն գործարաններուն որոնք չեն կրնար բանիլ առանց չողի արտադրող ածուխի: Գործաւորները իրենց օրականի կորուստին հետ պիտի կրեն նաեւ վառելանիւթի և կեանքի ուրիշ պիտայքներու սղութենէն յառաջ եկած կորուստը: Կառախուժբերը նուազ յաճախ կ'երթեւեկեն, նաւատորմին ռազմափորձերը լքուեցան և Թագաւորը կը ծանուցանէ թէ յետաձգած է այն այցելութիւնները գործնք պիտի տար ցամաքային Եւրոպայի մայրաքաղաքներուն:

Գործադուլներու վիսանները հաշուելու պահուն յիշել պէտք է թէ միայն գործատէրերը և գործաւորները չեն վիսառուողները: Անգղիոյ անցեալ տարուան երկաթուղիի գործաւորներու մեծ գործադուլին ժամանակ օրինակի համար, նաեւ Ամերիկայի Թրամուէյի գործաւորներուն բազմաթիւ գործադուլերուն ժամանակ, վիսառուող հանրութիւնն էր Մարգիկ անկարող կ'ըլլան իրենց գործատեղիները հասնիլ, կը պարտաւորին առաջադրուած ճամբորդութիւններ յետաձգել և մեծ անպատեհութիւններու կ'ենթարկուին: Կրնանք երեւակայել թէ ինչ կը պատահի, երբ Կ. պոլսոյ արուարձաններուն շոգենաւի և կառախուժբի բոլոր գործաւորները բանթող ընեն: Ամբողջ ժողովուրդը կը վիսառու գործադուլի ժամանակ, Պատերազմը կրնայ երբեմն ներելի ըլլալ, բայց միշտ կորուստ կը բերէ, նոյն իսկ եթէ ճարտարական պատերազմ ըլլայ:

Սակայն միշտ անիրաւ են գործադուլերն ու պոյքթիւնները: Չենք կարծեր, Բնականոն վիճակն է համաձայնութիւն գործատէրերու և գործաւորներու միջեւ: Ուղղութիւնն է ինչպէս քաղաքական նոյնպէս և ճարտարական աշխարհի մէջ փնտռուելու բարիք մը: Բայց ինչպէս կառավարութիւն մը, որ պատերազմի չփախուքիր, այլ տիեզերական խաղաղութեան կը ցանկայ անկեղծօրէն, հարկ կը համարի իր սպառազինումը շարունակել, վասն զի ուրիշ կառավարութիւններ ալ կը շարունակեն, ճիշտ նոյնպէս կը շարժին ճարտարական աշխարհի գործաւոր ու գործատէր երկու

բանակները: Եթէ Գերմանիա զօրաւոր բանակ ունաւատորմ ունենայ և Ֆրանսա չունենայ, այն ժամանակ Ֆրանսա իր զօրեղ զրացիին խաղալիկ կ'ըլլայ: Արդ հարստութիւնը գործութիւն կուտայ: Դրամատէրեր միանալով առեւտրական ահագին ընկերութիւններ կը կազմեն: Անհատ գործաւորը ինչ կրնայ ընել անոնց դէմ: Գործաւորներն ալ միանալու են, հաւասարութեան մտեցող ոեւէ պայմաններով բանակցելու համար իրենց գործատէրերուն հետ: Եւ լաւագոյն զէնքը զոր կրնան գործածել՝ գործադուլն է: Եթէ ջանան իրենց գործատէրերուն ինչքը փճացնել՝ գործարանները այրելով կամ ուրիշ ոեւէ միջոցներով, օրէնքի դէմ կը գործեն և կրնան իրաւամբ պատժուիլ: Սակայն իրաւունք ունին չգործելու, և երբ այդ մասին միաբանին իրենց մէջ, դարձեալ իրենց իրաւունքի սահմանին մէջ կը մնան: Պոյքթիւն ալ կրնայ գործադուլի ոչ-ապօրինաւոր կերպով, թէեւ նուազ արժանավայել կը թուի մեզի իբրև պայքարի մեթոտ: Խուժը մը գործաւորներ կրնան իրենց մէջ համաձայնիլ թէ այսինչ հաստատութիւններէն բան պիտի չգնեն: Եթէ այդ կէտին վրայ կանգ առնեն, ոչ ոք կրնայ ըսել թէ օրէնքի դէմ կը գործեն: Սակայն եթէ պահակներ կեցնեն հաստատութեան կամ վաճառատան մօտ և բռնութեամբ կամ սպառնալիքով ուրիշներու արգելին հոն յաճախել, չափը կ'անցնեն և կարգ մը երկիրներու մէջ օրէնքներ կան որ այդ արարքը կը պատժեն: Եթէ մարդու մը գործը ապօրինաւոր է, այն ժամանակ կառավարութիւնը պարտի դադրեցնել դայն: Եթէ ապօրինաւոր չէ, այն ժամանակ ոչ ոք իրաւունք ունի ուրիշներ նոյն գործին նպաստել արգելելու, և եթէ բռնութիւն գործածուի այդպիսի մէկը գործելէ արգելելու, կառավարութեան պարտքն է մարդը պաշտպանել:

Նոյնը ճշմարիտ է նաեւ գործադուլներու նկատմամբ: Գործաւորները կը միաբանին և գործադուլ կ'ընեն: Ուրիշ գործաւորներ կ'ուզեն թերեւս գործել այն օրականով զոր միւսները կը մերժեն: Առաջինները կրնան խօսելով տարհամոզել վերջինները, բայց երբ բռնութեան կը դիմեն, չարագործ կ'ըլլան և ուստի օրինական պատժի կ'ենթարկուին: Նոր Զելանտայի և թերեւս ուրիշ քանի մը երկիրներու մէջ օրէնք մը կայ որ գործադուլը կ'արգելէ մինչեւ որ ինդիքը իրաւարարութեան չյանձնուի և իրաւախոհութեան ձեռնարկ մը չըլլայ: Այս ընթացքը կրնայ առարկելի ըլլալ: Վերջերս յօդուած մը կարդացինք որ կ'ըսէ թէ Վէէճի մը բռնի կերպով իրաւարար ատեանի մը ենթարկուած անհաշտ



է կամաւոր բանակցութեան ազատութեան հետ :» Այսու ամենայնիւ գործադուլէ մը ամէնէն շատ նեղուողը կրնայ ընդհանուր ժողովուրդն ըլլալ, և պէտք է որ այդ հանրութիւնը ինքզինք այդպիսի նեղութենէ մը ազատելու միջոց մը ունենայ : Մաղթելի է որ գտնուի և ամէնուն կողմէ ալ իւրեւ ուղիղ ընդունուի մեթոս մը, որով վէճեր հարթուին առանց գործադուլի, հակաբանթողի կամ պոյքոթի դիմելու : Երբ այս ի գլուխ հանուի և քաղաքական վէճեր իրաւարարութեամբ լուծուին և ոչ թէ պատերազմով, Հազարամիային մօտեցած պիտի ըլլանք :

Չենք կրնար այս յօդուածը վերջացնել առանց յիշելու թէ հին բէթմիին ժամանակ «գործադուլ» և «պոյքոթ» այն բառերէն էին, որոնց գործածումը ի սպառ արգելուած էր մեզի գրաքննութեան կողմէ :

### ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Թ Ա Փ Ո Ի Ր

«Իջեւանին մէջ իրենց տեղ չկար» Ղուկ. Բ. 7 : «Իմ Տէրս գերեզմանէն վերցուցին, և չեմ գիտեր ո՛ւր դրին զայն» Յովհ. Ի. 13 :

Յիսուսի ծնունդին և մահուան ատեն տեղի ունեցան երկու դէպքեր, որոնք նոյն ճշմարտութիւնը կը շեշտեն : Շատ դարեր առաջ խոստացուած և մարգարէներէ գուշակուած Փրկիչը՝ աշխարհ պիտի դար. սակայն Բեթլեհէմի իջեւանը ճամբորդներով լեցուն՝ տեղ չտուաւ Յիսուսի, բացի իջեւանին մէկ անկիւնը գտնուած ստորին մէկ ախոռէն : Յիսուս «Իրեններուն եկաւ, և իրենները զինքը չընդունեցին :» Ան իր ամբողջ երկրաւոր կեանքին մէջ մարդերու նոյն վերաբերումին հանդիպեցաւ : Եւ վերջապէս Դողոթիայի գագաթը խաչուելով թաղուեցաւ գերեզմանի մթութեան մէջ : Բայց Յիսուս հրաշափառ յարութեամբ մը թափուր թողուց գերեզմանը : Մարիամ Մագդաղենացին յարութեան առաւօտը գերեզման վազելով, երբ կը տեսնէ գերեզմանը թափուր, կու լայ : Երկու հրեշտակներ Յիսուսի թափուր գերեզմանին մէջէն կը հարցնեն Մարիամի, «Ով կին, ինչո՞ւ կու լաս :» Մարիամ կը պատասխանէ, «Անոր համար որ իմ Տէրս գերեզմանէն վերցուցին, և չեմ գիտեր ո՛ւր դրին զայն :» Մարիամի գաղափարով Յիսուս գողցուած էր գերեզմանէն, հետեւաբար կու լայ : Եւ եթէ գիտնար գերեզմանին դատարկութեան բուն պատճառը, փոխանակ լալու պիտի ուրախանար : Իջեւանը թէև ճամբորդներով լեցուն էր, բայց քանի որ Յիսուս կը բացակայէր, հետեւաբար թափուր էր ան : Գերեզմանին մէջ Յիսուս չկար, յարու-

թիւն առած էր, հետեւաբար գերեզմանը թափուր էր : Պիտի յիշեմ կարգ մը բաներ՝ որոնք թափուրութիւն կը պատկերացնեն, քանի որ Յիսուս կը բացակայի անոնց մէջ, կամ պէտք եղածին պէս տեղ չգրաւեր :

Ա. Աշխուրհը. Երեւակայութեան թոյններով գացէք հազարաւոր տարիներ ետ, մինչեւ Եղեմի պարտէզը . հոն պիտի հանդիպէք Մեսիայի գալուստին մասին խոստումի մը : Աստուած ըսաւ թէ կնոջ սերունդը պիտի ջախջախէ օձին գլուխը : Ընդհանրապէս կը կարծուի թէ Աստուծոյ այս խոստումը այնքան տեղ բռնած էր մեր նախածնողներու միտքին մէջ որ երբ Եւա կը ծնանի Կայէնը, կը կարծէ թէ ան էր Աստուծոյ խոստացած մարդը որ պիտի ջախջախէր օձին գլուխը . հետեւաբար Կայէնի ծնունդին ատեն կ'ըսէ, «Մարդ ստացայ Տէրոյմէն» Հրեայ Ռարբիներու կարծիքով երբ Եւա կ'արտաքսուէր Եդեմէ, օգտուեցաւ վերջին պատեհութեանէն, և գաղտնապէս փրցուց զեղեցիկ և անուշաբոյր ծաղիկ մը, և պահեց զայն իր զգեստին մէջ : Աշխարհ չորս հազարէ աւելի տարիներ սպասեց և ազօթեց Մեսիայի գալուստին համար : Պարսիկներ կը սպասէին Սողոմոսի, որ պիտի յաղթէր Ահիւմանի և պիտի գրաւէր անոր թագաւորութիւնը : Չինացի իմաստունը, Կոմիտեկիոս, իր աշակերտները կ'ուզէ Սուրբին՝ որ պիտի երեւէր Արեւմուտքի մէջ : Հեթանոս պատմագիրներէն Տակիտոս և Սուետոնիոս կ'աւանդեն իրենց ժամանակուան ժողովուրդին մէջ գտնուած ակնկալութիւնը թէ Հրէաստանի մէջ յաղթական մը պիտի երեւի և պիտի տիրապետէ բովանդակ աշխարհի : Ահա ամբողջ աշխարհը ակնկառոյց կը սպասէր Մեսիայի գալուստին, և սակայն երբ Մեսիան եկաւ, տեղ չտուաւ Անոր :

Աշխարհ կը նմանի Բեթլեհէմի իջեւանին : Երբ Յիսուս աշխարհ եկաւ, չափազանց զբաղումի մէջ գտաւ զայն . իջեւանին մէջ տեղ չկար, հետեւաբար մտորին մէջ ծնաւ : Ապահով չէր Ան Հրէաստանի մէջ, հետեւաբար Եգիպտոս փախաւ : Իր հայրենակիցները մերժելով զինքը՝ ուղեցին գահաւէժ մը վար ձգել : Ան իրապէս եղաւ «մարդերէ անարգուած :» Հիւրամերժ աշխարհը գոչեց, «Չենք ուզեր որ այդ մարդը մեր վրայ թագաւորէ :» «Թող խաչուի, թող խաչուի :» Եւ այսպէս տուաւ փուշէ պսակ մը Անոր զլիւտուն, խաչ մը՝ Անոր կրանակը, և խաչեց զԱյն երկու աւազակներու մէջտեղ : Ահա այսպէս աշխարհը հիւրընկալեց իր Փրկիչը : Տարիներ առաջ Քաջմիտի Ռաճան Անգղիոյ վերթորիա թագուհիին նուիրեց ոսկի քանդակներ :



րով դարդարուն մահճակալ մը և ամպովանի մը, որոնք 16 հազար ոսկիէն աւելի կ'արժէին: Ինչ նուիրեց աշխարհը իր Փրկչին. — սոսկ յարդէ անկողնիկ մը: Լոնտոնի աշտարակին մէջ կայ գոհարազարդ թագ մը, որ երեք միլիոն ոսկիէ աւելի կ'արժէ: Ապերախտ աշխարհը, սակայն, փոխան գոհարազարդ թագի, փուշէ պսակ մը տուաւ Յիսուսի: Յիսուսէ քանի մը տարի առաջ, երբ Պոմպէոս Հոմո դարձաւ յաղթական, վասն զի 12 միլիոն ժողովուրդներ սպաննած կամ յաղթած էր, ողջունուեցաւ յաղթութեան կամարներով և մեծարժէք կոթողով մը, և արտօնուեցաւ հագնիլ իր յաղթութեան հանդերձը ձերակոյտին մէջ: Աշխարհ ունէր ծափահարութիւն, յաղթութեան կամարներ և հանդերձներ կայսերական արիւնարբուներու համար. սակայն ճաղկանք, թուք, փուշէ պսակ և խաչ՝ խաղաղութեան Իշխանին, Յիսուսի, համար: Աշխարհ այսօր ալ նոյն ընդունելութիւնն ըրած է Յիսուսի: Աշխարհի բովանդակ մարդերուն հազիւ մէկ երրորդը կը կրէ այսօր Յիսուսի անունը, և անոր ալ մեծ մասը՝ սոսկ երեւութապէս: Աշխարհը շատ տեղ ունի թագաւորութիւններու, պատերազմներու, վաճառականութեան և հարստութեան համար, սակայն Յիսուսի և Անոր թագաւորութեան համար՝ աննշան տեղ մը միայն: Այսպէս աշխարհ անարգ ախօռը կու տայ Յիսուսի, մինչ կրնայ տալ հանգըստաւէս իջեւանը: Աշխարհը առանց Յիսուսի թափուր և ամայի տեղ մ'է, Անոր թափուր գերեզմանին պէս: Աշխարհը առանց Յիսուսի անկենդան դատարկութիւն մ'է: Եւ որովհետեւ աշխարհը չտար կարեւոր տեղը Յիսուսի և Անոր թագաւորութեան, մեծապէս կը պատշաճի Մագդաղենացիին սա խօսքը թէ Քիմ Տէրս աշխարհէ վերցուցին, և չեմ գիտեր ո՛րը գրին զայն:»

Բ. Աղէք. Հայ ազգը ազգովին Բրիստոնէութիւնը ընդունողներու մէջ առաջին է: Նոյն իսկ Յոյներ Հայ ազգէն 15 տարի վերջ ազգովին ընդունեցին Բրիստոնէութիւնը Մեծն Կոստանդիանոսի ժամանակ: Ուրեմն Հայ ազգը այս մասին պարծանքի բնական իրաւունք ունի: Եւ Հայը Սանդուխտ կոյսէն մինչև Կիլիկիոյ նահատակները բազմաթիւ և թւաւոր մարտիրոսներ տուած է Բրիստոնէական կրօնին համար: Անցեալին մէջ Հայ ազգը մեծ տեղ տուած է Յիսուսի, հետեւաբար դարեւու յարձակումներուն դէմ կուրծք տալով անվկանդ պահած է իր գոյութիւնը մինչև այսօր: Սակայն այսօր կարգ մը անհաւատ Հայեր իջեւանին տեղ ախօռը կ'ուզեն տալ Յիսուսի. կ'ուզեն

զողնալ Յիսուսը Հայ ազգին մէջէն, և մեր խեղճ ազգը վերածել անկենդան դատարկութեան մը: Բայց հազարաւոր տարիներ Յիսուսով իր գոյութիւնը պահող ազգ մը, այսուհետեւ առանց Յիսուսի իր գոյութիւնը չկրնար շարունակել: Պիտի ըսուի թէ Բրիստոնէութենէ առաջ Հայ ազգը ինչպէս կրցաւ պահել իր գոյութիւնը, ուրեմն Բրիստոնէութիւնը չէ պատճառը Հայ ազգին գոյութեան պահպանումին: Ազգ մը չկրնար երկար առանց պահել իր գոյութիւնը առանց ոյժի: Հայ ազգը Բրիստոնէութենէ առաջ իր թագաւորութեամբ, բիրտ ոյժով կրցաւ պահել իր գոյութիւնը: Սակայն սոսկ բիրտ ոյժն ալ չկրնար երկար դիմանալ: Եգիպտոսի, Ասորեստանի, Բաբելոնի, և Հոմերի կայսրութիւնները չկրցան երկար դիմանալ սոսկ բիրտ ոյժով: Նափօլէոն ժամանակ մը կոխեց Եւրոպիոյ պարանոցին վրայ, սակայն քանի որ անոր կայսրութիւնը բիրտ ոյժի վրայ հաստատուած էր, հետեւաբար շուտով ջախջախուեցաւ: Հայ ազգը մանաւանդ իր թագաւորութիւնը, իր ոյժը կորսնցնելէ վերջ, կատաղի թշնամիներու վայրագ յարձակումներուն դէմ ինչպէս կրնար պահել իր գոյութիւնը, եթէ չունենար Բրիստոնէական կրօնը իրբեւ ոյժ: Ինչ բան մղեց Քաջն վարդանը և իր քաջարի ընկերները նահատակութեան, եթէ ոչ Բրիստոնէական կրօնի ոյժը: Ինչ բան մղեց մեր նահատակ նախնիքները արիւնոտ մարտիրոսագրութեան մը, եթէ ոչ Բրիստոնէական կրօնի գերագոյն ոյժը: Բրիստոնէութիւնը բարերար դեր մը կատարած է մեր ազգային կեանքին պահպանութեան մէջ: Եւ այսօր կարգ մը անհաւատ Հայեր կ'ընդունին եղբայրութեան, արդարութեան, հաւասարութեան և ազատութեան վսեմ սկզբունքները, և կը մերժեն այդ սկզբունքներու միակ Աղբւրը, Յիսուսը: Ասոնք կը նմանին այն յիմարին՝ որ կ'ընդունի մանուկը և կը մերժէ մայրը, որ ծնած է զայն: Ասոնք յիմարաբար կ'ընդունին պտուղը և կը մերժեն ծառը որ միակ պատճառն է պտուղին. կ'ընդունին աղբիւրէն վաղած ջուրը և կ'ուրանան ակը՝ ուսկից այդ ջուրը կը բղխի: Թողէք այդ յիմարները իրենց կատարեալ յիմարութեան մէջ, Բոթոթին հաչիւնը չկրնար կասեցնել փիղին ընթացքը: Բրիստոնէութիւնը կատարած է և կը կատարէ իր դերը Հայ ազգին մէջ հակառակ անհաւասաններու բարբառնջանքներուն: Յիսուսը իր մէջէն վտարող ազգ մը կատարեալ ունայնութիւն և թափուրութիւն կը պատկերացնէ: Եթէ Հայ ազգը արտաքսէ Յիսուսը իր մէջէն, և կամ իջեւանին տեղ ստորին ախօռը տայ Յիսուսի, այն ատեն պի-



տի պատշաճի մեծապէս Մագդաղենացիին խօսքը թէ «Իմ Տէրս Հայ ազգէն վերցուցին, և չեմ գիտեր ո՛ւր գրին զայն :»

Գ. Եկեղեցիք. Յիսուս Եկեղեցիին գլուխն է, և խոստացած է մինչև աշխարհի վերջը անոր հետ ըլլալ : Սակայն ո՛րքան Եկեղեցիներ իջեւանին տեղ ախոռը, աննշան տեղ մը, միայն կու տան Յիսուսի Եկեղեցի մը՝ որ մեծ տեղ կու տայ Յիսուսի, կ'ապարի, կը գործէ, կ'ազօթէ, և բաժանարար ոգին չկըրնար մուտ գտնել անոր մէջ, և կը ցուցադրէ օգտակար պտուղներ : «Ծառը իր պտուղէն կը ճանչցուի :» Գարողիչ մը իր քարոզը վերջացնելէ յետոյ բեմին վրայ ծոցեցաւ և վայրկեան մը ժողովուրդին նայեցաւ լռիկ . յետոյ ըսաւ, «Ասիկա քարոզիս վերջը չէ, երբ տուն երթաք, զգուշացէք ըսելէ թէ քարոզը լմնցաւ : Ո՛չ, չլմնցաւ, այլ միայն քարոզուեցաւ : Իմ մասս լմնցաւ, ձերը կը սկսի այս վայրկեանէն :» Եկեղեցի մը որ չճանչնար իր պարտականութիւնը, և կը կարծէ թէ իր պարտականութիւնը սոսկ կիրակի օր քարոզ լսելէ կը բաղկանայ, անգործ կը մնայ և չուզեր գործել անմահ հոգիներու փրկութեան համար, այդ Եկեղեցիին մէջ Յիսուս տեղ չունի : Ո՛րքաններ կը ջանան գողնալ Յիսուսը Եկեղեցիէն և փոխարկել զայն անկենդան մեռելութեան մը, չոր ոսկորներու դաշտի մը : Ո՛րքան Եկեղեցիներու համար կը պատշաճի դժբախտաբար Մագդաղենացիին խօսքը թէ «Իմ Տէրս Հայ ազգէն վերցուցին, և չեմ գիտեր ո՛ւր գրին զայն :»

Դ. Տոնք . Առանց Յիսուսի երջանիկ և խաղաղ տուն մը կազմել անհնար է : Եւ սակայն ո՛րքան տուններ չեն ուզեր իջեւանը տալ Յիսուսի, այլ սոսկ ցած ախոռը : Կոպալաշտ Հոռոմայեցիներ ունէին իրենց տուններուն մէջ յատուկ տեղ մը առնին աստուածներու նուիրուած, ուր կը պահուէին աստուածներու կուռքերը և կը պաշտուէին : Բարեպաշտ Ուրլըն եպիսկոպոսը սովորած էր միշտ հարցնել, «Սեղան մը կանգնած ևս տանդ մէջ :» Աբրահամ ամէն տեղ Աստուծոյ համար սեղան մը կը կանգնէր : Յետո՛ւ հրապարակաւ կը յայտարարէ ժողովուրդին, «Ես և իմ տունս Եհովան պիտի պաշտենք :» Ասոնք երջանիկ էին, վասն զի Աստուծոյ մեծ տեղ տուած էին իրենց տուններուն մէջ : Յիսուսի բացակայած տան մէջ Սատանան կը գտնուի, կոխներ, վէճեր կը տիրապետեն : Ուրեմն մեծ տեղ տուէք Յիսուսի ձեր տուններուն մէջ, եթէ կ'ուզէք իրապէս երջանիկ ըլլալ այս կեանքիս մէջ : Մի թողուք որ պատշաճի Մագդաղենացիին խօսքը ձեր տուններուն համար թէ «Իմ

Տէրս Հայ ազգէն վերցուցին, և չեմ գիտեր ո՛ւր գրին զայն :»

Ե. Մարդու կեանք . Անհատ մարդն ալ չկրնար ապրիլ առանց Յիսուսի : Ո՛րքաններու կեանքերը լեցուն են աշխարհիկ բաներով, հետեւաբար տեղ չկայ Յիսուսի համար : Ծանձ մը կրնայ քալել սենեակի մը ձեղունին վրայ, վասն զի անոր ոտքերուն մաշկակապին մէջ դատարկութիւն կայ : Մարդը հոգեւորապէս ապրելու և քալելու համար պարտի պարպել իր կեանքը աշխարհային սնտոի բաներէ և լեցնել միայն Յիսուսի կեանքով : Սակայն մարդուն կեանքին յետագայ մասերը յաճախ տեղ չունին Յիսուսի համար :

1. Մէրդ . Ծատեր այնքան լեցուցած են իրենց միտքերը աշխարհային գիտութիւններով որ Յիսուսի համար տեղ չունին բնաւ : Այսօր Հայ ազգին մէջ անհաւատ սկեպտիկներու առատութիւն մը կայ, որոնք իրենց միտքին բոլոր տեղը տուած են աշխարհիկ գիտութիւններու : Յիսուս տեղ չունի հոն : Ծատեր կը քննեն երկրի խորը, բայց երբեք չեն քններ Յիսուսի սիրոյն խորը . կը լողան գիտութեան ովկէանին մէջ, սակայն չեն ուզեր լողալ Յիսուսի սիրոյն լայնածաւալ ովկէանին մէջ : Ո՛րքան տեղ տուած էք ձեր միտքին իջեւանին մէջ Յիսուսի :

2. Սէրդ . Այսօր սիրտի իջեւաններուն մէջ քիչ անգամ տեղ կայ Յիսուսի համար : Աշխարհային և մարմնաւոր խորհուրդներու, սին փափաքներու, սնտոի զգացումներու, փողփողուն հաճոյքներու և հոգեաւանջ մեղքերու համար շատ տեղ կայ սիրտերու մէջ . բայց Յիսուսի, ազօթքի, անմահ հոգիներու ծառայութեան և Յիսուսի հետ հաղորդակցութեան համար շատ աննշան տեղ մը միայն : Սիրտ մը առանց Յիսուսի կը նմանի անլոյս կանթիկի կամ անկենդան զիակի : Դրէք երկտրականութեամբ լեցուն մարմնի մը քով երկաթի կտոր մը, և անա այդ կտորն ալ պիտի երկտրանայ բաւական ատեն : Դրէք Յիսուսը ձեր սիրտին մէջ, և ձեր սիրտը պիտի դառնայ կենդանի տաճար մը Յիսուսի : Յիսուս արդէն տեղ կը փնտռէ սիրտերու մէջ, տեղ մը՝ ուր լեցնէ իր առատ օրհնութիւնները, իր անդորրաւէտ խաղաղութիւնը, իր անզուգական կեանքը, իր անաղօտ լոյսը, և իր կենսապարգեւ Հոգին : Տեղ տուած էք Յիսուսի ձեր սիրտերուն մէջ :

Տիգրանակերտ Կ. ՅՈՂԱՆ Ե. ՍԻՆԱՆՍԱ



### ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՕԳՏԱԿԱՆ ՈՒ ՎՆԱՍԱԿԱՆ ՄԱՆՐԵՆՆԵՐԸ

(Էնս Տ. Րոճըր)

Դ.

#### Եզրակացութիւններ

Ինչպէս դիմադրելու է այն ախտերուն, որոնք մանրէ-ներու յարմարութիւնն առաջնորդ են: Մանրէները պզտիկ բոյսեր կամ կենդանիներ են զորոնք հազիւ կը բնանաք տեսնել ամէնէն զօրաւոր մանրագէտներով: Անոնք զարմանալի արագութեամբ կ'աճին ու կը բազմապատկուին: Իրենց աճումի ընթացքին շատ տեսակ քիմիական փոփոխութիւններ յառաջ կը բերեն այն նիւթին մէջ ուր կը բնակին: Այս փոփոխութիւններէն շատեր շատ օգտակար են մարդոց համար: Կաթնատուներն, գարնջուրի գործարանին և ուրիշ շատ մը ճարտարարուեստներու մէջ, ինչպէս նաև մեռած գործարանաւոր նիւթերու տարրալուծումին և հողը երկրագործութեան համար պատրաստելու գործին մէջ մանրէները կարեւոր դեր մը կը խաղան:

Միւս կողմէն մանրէներէն ոմանք, որ մարդկային մարմինին վրայ կ'ապրին իբրև մակարոյծ, թունաւոր բազդաբուծիչներ կ'արտադրեն, որոնք ախտեր յառաջ կը բերեն: Այս տեսակ ախտածին մանրէներ մարմինէն կ'արտաքսուին կոկորդէն, թոքերէն, մորթէն կամ աղիքներէն դուրս ելած արտադրութիւններով և այդ կերպով կը ծաւալին հասարակութեան մէջ, կը փոխանցուին անձէ մը ուրիշ անձ, կամ ուղղակի հպումով իրարու ձեռքին կամ ղգեստին, և կամ ջուրի կամ կաթի միջոցով:

Այս վնասակար մանրէները արգիլելու գլխաւոր կերպերը հետեւեալներն են.

1. Արգիլելու հիմնարկները իրենց շարժման միջոցով: Կողմացուցէ Բուր Բարակալ անոնք ուրիշ որևէ մէկու մը անոնցմէ անձնապէս մանրէ առնելը խափանելու համար:

Պէտք է նաև Բուր Բարակալ անոնք ինչպէս որ առաջադրութիւնները հակաբիւրս: Թոքախտին մէջ խուսի կրնայ ամբողջ տուել մը կամ թաղի մը օդը վարակել: Ժանտատենդային ջերմի կամ հնատախտի ատեն հիւանդին կը կարգաւոր կրնայ մզիլ ըմպելի ջուրի աւաղաններուն կամ խողովակներուն մէջ և մէկ հարուածով վարակել հազարաւորներ: Կրնայ նաև անուղղակի կերպով մտնել կաթի մէջ, կամ ձանձեռու միջոցով կերակուրներու մէջ ու այդ կերպով անցնիլ ու վարակել շատեր:

Պէտք է այլև կամ հակաբիւրս այն ամէն բանե-

րը որոնք հիւանդին գործածութեան յատկացուած են կամ դպած են անոր:

2. Ախտածին մանրէներու անջ մը որքան անջ մը անցնելը արգիլելու: Ախտածին իւրաքանչիւր մանրէ մասնաւոր ախտի մը պատճառ կ'ըլլայ և մարմինին մէջ կը մտնէ որոշ քանի մը կէտերէ. ասոնցմէ աղատուել կարելի է այս մոլեգի դոզներուն պահապաններ դնելով: Չեր խմած և գործածած ջուրը աղտոտութեանց դէմ պաշտպանեցէք: Եթէ ջուրի հասարակաց աղբիւրները կասկածելի են ջուրը խօնել առաջ եւացուցէ: Հասարակ ձանձեռու մի վստահիք: Կարելի եղածին չափ զգուշացէք կառախումբերու վրայ, թատրոններու մէջ, շոգեկառքի կայարաններու մէջ, դպրոցներու և ուրիշ հասարակաց վայրերու մէջ ջուր խմելէ, ու հասարակաց գործածութեան յատկացուած գաւաթներով ջուր խմելէ: Չուրի տեսքը վստահելի չէ, այն կրնայ յստակ ու պայծառ ըլլալ ու նորէն ալ ժանտատենդային ջերմի մանրէներ բովանդակել:

Կաթին մարմնիւն ալ հոգ արէք. որովհետև ժանտատենդի, կարմրախտի, կեղծամաշկութեան մանրէներ, և մանուկներու ամառային հիւանդութիւնները յառաջ բերող մանրէներ կրնան անոր մէջ մտած ըլլալ: Կովէն առնուած կաթը մաքուր է, բայց յաճախ կ'աղտոտի ու կը վարակուի միւնչեւ որ յաճախորդին հասնի. զխաւորաբար կրնայ վարակուել կթողին ձեռքէն, կովին մարմինէն, մէջը դրուած դոյլէն կամ շիշերէն, կաթը ամանոց մարդուն ձեռքէն, եւն: Կաթը պակտէրիաններու համար լաւագոյն սնունդ մըն է և անոր մէջ մըտնողներ հոն կ'աճին ու կը բազմապատկուին: Եթէ կարելի չըլլայ կաթը առնել կաթնարանէ մը, ուր մաքրութեան ամէն նախազգուշութիւններ կ'ըլլան, միակ ապահով ճամբան է կաթը մանրէազերծել ամրացնել (Սանթիկրատի 71 աստիճան ջերմութեամբ 20 վայրկեան եփելով): Այս կերպով կաթին մէջի բոլոր պակտէրիանները կը փճանան:

Մի որքէ հոս կամ կիսեք պատենաւոր ծովածածմակներ, որոնց ուրիշ ըլլալը անձանօթ է ձեզի: Մեր ծովախորշերէն ու ձկնարուծարաններէն շատեր կոյուղիներու հոսումներէն աղտոտուած են. և այդ տեսակ ծովածածմակներ ուտելով կարելի է ժանտատենդով վարակուել:

Չգոյ ինչք հոս կերակուրներու մասին: Առէկ մը եփելը հասարակ մանրէները կը փճացնէ, բայց հոս ուտելը կրնայ վարակումի պատճառ ըլլալ, եթէ կերուածը աղէկ մը լուսացուած ու մաքրուած չէ:

Մէկու մը, որ հիւանդ է, մի թողուք որ կե-



րակուրի պատրաստութեան մասնակցի: Գլխուցաւ մը կամ թեթեւ ջերմ մը ժանտատենդի սկզբնաւորութիւնը կրնայ ըլլալ:

Բոլոր կերակուրները պաշտպանեցէք ճանճերէ, որոնք կ'աճին աղքատութեամբ մէջ, անոնք կրնան ասի աղտոտ տեղերէն մանրէներ փոխադրել իրենց ոտքերով ու այդ կերպով վարակել կերակուրը, որուն վրայ կը նստին:

Դատարկեցէք կամ հողով լեցուցէք այն փոս տեղերը ուր աղտոտ ջուրեր լեցուած են և կայուն ջրի լճակներ ձեւացուցած: Այդ կերպով ազատած պիտի ըլլաք մեծերէն, որոնք կրնան ճահճատենդի մանրէներ փոխանցել:

3. Մանրէները առողջ անձերու մէջ տեղափոխուելու արհիւնցէ: Առողջ մարդ մը կրնայ աւելի դիմանալ ախտածին մանրէներու յարձակումներուն քան տկար ու հիւանդոտ անձ մը:

ձեր կենսական դիմադրութիւնը պահպանեցէք. ձեր ընդհանուր առողջութիւնը խնամեցէք յարմար սնունդով, թարմ օդով, տաք աղբյուրով և մարդասով: Յիշեցէք որ կերակուրի սովէն տանջուողներէ աւելի թթուածինի սովէն տանջուողներ կան:

Ձեր սնունդները օրաօրեցիկ, վարագործները բացէք որ ներսը արեւ գայ, ու ձեր սենեակները չոր պահեցէք:

Մարմինին վրայ յարձակող ախտածին մանրէներու դէմ յաջողապէս մաքրուելու համար մարմինը պէտք է իր սովորական ջերմութիւնը պահէ: Եթէ այս ջերմութիւնը ցուրտ տեղեր անպատշապար կերպով պտակելով նուազի՝ թշնամին այդ կերպով յարմար առիթ մը գտած կրնայ համարուել:

Ժամանակներ կան երբ բժիշկները այս դիմադրութեան ուժին արուեստական օգնութիւն մը կրնան ընել — պատուաստելով (որ ծաղկախտի դէմ միայն կրնայ պաշտպանել,) կամ հակաթոքսի գործածութեամբ (որ կեղծամաշկութեան դարմանումին կ'օգնէ):

Վիճակագրութեանց մէկ ուսումնասիրութիւնը շատ որոշ կերպով կը ցուցնէ թէ ի՞նչ կատարուած է այս ուղղութեամբ: Միայն Մասաչուսէթսի (Միւսց. Նահանգներ) մէջ վերջին 10 տարիներու մէջ պատահող մահերու թիւը բաղադրուած է հետեւեալ իրողութիւնները կը տեսնենք.

(Ա) Ջուրի և կաթի մաքրութեանց զգուշութիւնը 1904ին փրկեց 400 անձեր, որոնք մեռած պիտի ըլլային 1894ին, եթէ փոխանակ 1904ի այն ատեն բռնուած ըլլային ժանտատենդային ջերմէ:

(Բ) Օգաւորումի և կեանքի ընդհանուր պայմաններուն բարեփոխումը, և թոքախտաւորներու խուսիսի դէմ կատարուած զգուշութիւնները 1904ին 1,700 հոգիներ փրկեցին, որոնք 1894ին թոքախտէ մեռած պիտի ըլլային:

(Գ) Կեղծամաշկութեան համար գործածուած հակաթոքսի դարմանը 1904ին 1,800 կեանքեր փրկեց, որոնք 1894ին կեղծամաշկութենէ մեռած պիտի ըլլային:

Ախտերու դէմ մղուած այս յաջող պայքարը պիտի կրնանք շարունակել: Դուք, բոլոր ընթերցողներ չի՞ պիտի ուզէիք տարածել այն ծանօթութիւնները զորոնք կը գտնէք այս յօդուածին մէջ, միեւնոյն ատեն դուք անձամբ գործադրելով հոս պատուիրութեանը:

Վ Ե Ր Զ

### ՅՈՂՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ ԻՐԻԿՈՒՆ ՄԸ  
Օրը կերակի էր: Տեղը՝ Նիւ Եորքի մէջ Աբ. Պօղոս Առաքեալ անուն Պապական եկեղեցին: Առիթը՝ աւետարանչական բնոյթ ունեցող պաշտամունք մը որ Լէպլը անունով ծանուցուած էր Դերակատարը՝ եկեղեցիին քահանաները, «Պօղոսեան Հայեր» յորջորջուող դասակարգէն, որոնք նոր մեթոտներով Հին եկեղեցիին մարդ սիրաշահիլը իրենց մասնազիտութիւն ըրած ըլլալով իրենց նպատակը իրագործելու համար երբեմն երբեմն շարժանքով ամէն օր ժողովներ կ'ընեն: Արդ այդ իրիկուն Պապական եկեղեցիին մէջ քիչ շատ Բողոքական ձեւ ունեցող ժողովի մը հանդիսատես ըլլալու հետաքրքրութեամբը հոն քաշուեցանք:

Երբ ժամը ծէն քանի մը բոլոր ատաղ եկեղեցին հասանք, հսկայ շէնքին բոլոր նստարանները արանց ու կանանց մեծ բաղմութեամբ զբաւուած գտանք: Մինչ դէպի Սօրանը կը նայէինք ամէն բոլոր մը եղաւ, բազմութիւնը ոտքի ելաւ, նստարանները այնպէս շրջեցին որ ժողովուրդը երկու մասի բաժնուեցաւ իրարու հանդիպակաց ուղղութեամբ, և ամէնն ալ դարձան դէպի բարձրացեալ բեմը ուր կանգնած էր Պօղոսեան Հայերէն մէկը: Երկայնահասակ, պարզազգեստ ու շնորհաձեւ քահանայ մը որ առանց յառաջարանի սկսաւ խօսիլ ըսելով թէ իրեն ուղղուած կարգ մը զբաւոր հարցումներուն պիտի պատասխանէ: Իւրաքանչիւր հարցումը կարգաց և անոր պատասխանը տուաւ:



Անա այդ հարցումները, ոմանց ալ պատասխանը շատ համառօտ ձեւով:

1. Տուէյ Աբ. Գրքին (Պապական եկեղեցիին որդեգրած Անգղիերէն թարգմանութիւնը) պատմական ծագումը ինչ է: «Տուէյ» բառը ինչ կը նշանակէ:

2. Նոր կտակարանէն ինչպէս կրնաս հաստատել Պատարօզին խորհուրդը:

Ի պատասխանի քահանան Տէրունական Ընթրիքին մատակարարման պարագաները պատմեց, մասնաւորապէս չեղտելով թէ Յիսուսի «Այս է մարմին իմ» խօսքը գոյափոխութեան իմաստով հասկցուելու է:

3. Անցեալ իրիկուն ճառիդ մէջ Մարտինոս Լուսերը բազմակնութեան ջատագով ներկայացուցիր: Ի՞նչ փաստ ունիս:

Քահանան պատասխանելով երկարօրէն պատմեց Լուսերի կեանքին այն դժբախտ միջոցէս, երբ բարեկարգիչը կինը ողջ եղող Գերման իշխանի մը երկրորդ անգամ ամուսնանալուն հաւանութիւն տուաւ:

4. Պապական եկեղեցին կը վարդապետէ թէ առանց մկրտուելու մեռնող երախաները դժոխք կ'երթան: Ասիկա անխիղճ ու անիրաւ կարգադրութիւն մը չէ՞:

Պատասխան: Պապական եկեղեցիին վարդապետութիւնը ասիկա չէ: Եկեղեցին չըսեր թէ չմկրտուած երախաները երբ մեռնին դժոխքը կ'երթան, ինչ որ մեծ անարգարութիւն մը պիտի ըլլար: Ոչ ալ կ'ըսէ թէ երկինք կ'երթան, ինչ որ հաւատարապէս մեծ անիրաւութիւն մը պիտի ըլլար: Արդա՞ր է որ իր բոլոր կեանքը հաւատքի և Քրիստոնէական ծառայութեան մէջ անցուցած չափահաս սուրբ մը և անձամբ հաւատալու անկարող և եկեղեցիին սուրբ խորհուրդէն զրկուած երախայ մը միեւնոյն երանութեան վիճակին արժանանան: Եկեղեցին կը հաւատայ որ ասանկ երախաներ՝ թէպէտ դժոխք չեն երթար, ոչ ալ երկինք կ'երթան, հապա դրախտաբանակ բայց երկինքի կատարեալ երանութենէն և Աստուծոյ երանելի տեսութենէն զրկուած կը մնան: Իրենց բնածին ընդունակութեան չափովը երանութիւն կը վայելեն, բայց այդ չափը հարկաւ սուրբերուն և մարտիրոսներուն փառաւոր վիճակը չէ:

5. Միջին Դարերու միջոցին Պապականութիւնը Եւրոպայի մէջ գերիշխան էր. միանգամայն այն ժամանակամիջոցը պատմութեան խաւար չըջանն է: Ասիկա չափացուցաներ որ իմացական խաւար

րի հետ արամբարանօրէն զուգորդուած է Պապականութիւնը:

Պատասխան: Ոչ: Այն միջոցին Եւրոպա քաղաքական քայքայումի չըջանէ մը կ'անցնէր: Հիւսիսէն բարբարոս ցեղերը խուժելով երկիրը ողողած և ամէն տեսակ հաստատութիւնները տակնուվրայ ըրած էին: Այդ մթութեան մէջ միակ պայծառ կէտը եկեղեցին էր որ խաւարէն լոյս և քառսէն կարգ դուրս բերելու փրկաւէտ դերը կը կատարէր: Արդ միջնադարեայ խաւարն իսկ կը փաստաբանէ Պապականութեան դատը որուն գործը միշտ աշխարհը լուսաւորել եղած է:

6. Ինչպէ՞ս կը մեկնես սա պարագան թէ Ամերիկայի Կաթոլիկութիւնը 10—12 միլիոն ժողովուրդ ունենալով հանդերձ՝ իր մէջը առաջնակարգ և հանրածանօթ անձնաւորութիւններ չպարունակեր. բոլոր մեծ մարդիկը կրօնքով Բողոքական են:

Քահանան պատասխանեց կարգաւով ծանօթ, հարուստ և զիտուն Կաթոլիկ անուններու ցանկ մը, և պնդեց թէ հարցումին ենթադրութիւնը շիտակ չէ:

7. Ինչո՞ւ ուրբաթ օրը պահք կը պահէք:

Պատասխան: Այն օրը Քրիստոսի քաւ արար չարչարանաց ու մահուան օրը ըլլալով Կաթոլիկ բարեպաշտութիւնը միս ուտելու մարմնաւոր հաճոյքէն հրաժարում կը յանձնարարէ ինչան ջերմանդ գնահատութեան Քրիստոսի կատարած փրկազործութեանը հանդէպ: Եթէ Աստուածօրդին մեր տեղը մեռաւ ի սէր մեր, չա՞րժեր որ մենք ալ երախտադիտութիւն յայտնենք չարաթը մէկ անգամ ի սէր Անոր հաճոյքէ մը հրաժարելով:

8. Առանց Քրիստոսի մահուանը Աստուած չէ՞ր կրնար մարդը փրկել:

9. Իրօք կը հաւատա՞ք թէ դժոխքի մէջ կրակ կայ ուր մարդիկ ցլաւիտեան պիտի տանջուին:

Պատասխան: Այո: Որովհետեւ Քրիստոս այսպէս կ'ըսէ:

10. Ինչո՞ւ Կաթոլիկութիւնը կզերին ամուրի մնալը կը հրամայէ: Աղէկ չըլլա՞ր որ դուք քահանաներդ ամուսնանաք:

Պատասխան: Ամուրիութիւնը ընտրելու երեք պատճառներ ունինք: (ա) Տէր Յիսուս չամուսնացաւ: Կ'ուզենք այս մասին ալ Անոր սուրբ օրինակին հետեւող ըլլալ: (բ) Ամուրի կզերականը իր անբաժան ուշադրութիւնը և ժամանակը կրօնական գործին կը նուիրէ, որով Աստուծոյ թագաւորութեանը աւելի ազդուապէս ծառայած կ'ըլլայ: Իսկ ամուսնացած կզերը (զոր օր. Բողոքականը) կէս իր կնոջը կէս իր եկեղեցիին կը ծառայէ: (գ)



Մեր պաշտօնը մեզ միշտ ամէն դասակարգի և իր-  
գական սեռին հետ շփման մէջ կը պահէ. եթէ ա-  
մուսնացած ըլլայինք, մեր կիները թերեւս նա-  
խանձէին որմէ տեսակ տեսակ դժուարութիւն և  
ապերջանկութիւն կրնար ծագիլ:

11. Եթէ բարի մարդ մը կրնայ փրկուիլ, ին-  
չո՞ւ կ'աշխատիք զանիկա դարձի բերելով Կաթո-  
լիկ շինել:

Պատասխան: Որովհետեւ աշխարհի փրկու-  
թեանը համար Աստուծոյ ընտրած միջոցը Եկեղե-  
ցին է, և Քրիստոսի Եկեղեցին Կաթոլիկութիւնն է:

Քահանան իբր երեք քառորդ ժամ այս հար-  
ցումներով զբաղեցաւ և իր պատասխանները շատ  
հետաքրքրական ընելու յաջողեցաւ: Յայտնապէս  
դաստիարակուած մարդ մը ըլլալով, մաքուր լեզ-  
ուով, յստակ շէշտով, տրամաբանական ոճով, մշա-  
կուած արտայայտութեամբ և անկեղծ եռանդով  
կը խօսէր: Երբեմն իր խօսուածքը ճարտար սրա-  
մըտութեամբ ալ կը համեմէր: Անոր ճարտասա-  
նութեան մէջ քաղաքավարութիւն և փափկանկա-  
տութիւն կար: Ունկնդիր բազմութեան վրայ  
նպաստաւոր և համոզիչ տպաւորութիւն ձգելով  
բեմէն իջաւ:

Անոր ետեւէն բեմը ելաւ ուրիշ քահանայ մը  
որ «Ես ինչո՞ւ Կաթոլիկ եմ» նիւթին վրայ քարո-  
զեց: Այս հարցումին, ըսաւ, իւրաքանչիւր մարդ  
տարբեր պատասխան կու տայ: Կաթոլիկ հաւատքը  
այնքան ընդարձակ եղելութիւն մըն է որ անոր  
ամէն հանգամանքը ամէն մտքի հաւասար ոյժով  
չկրնար ազդել: Անկրօնութենէ կամ Բողոքակա-  
նութենէ եկած ամէն նորադարձ իր առանձնայա-  
տուկ պատճառաբանութիւնը ունեցած է: Ես, որ  
շատ երկիրներու մէջ Առաքելական (այսինքն ա-  
ւետարանական) ժողովներ ընելով բազում նորա-  
դարձներու հետ շփում ունեցած եմ, փորձով գտած  
եմ որ Կաթոլիկութիւնը շատ զանազան ոյժերով  
կը հրապուրէ տարբեր տարբեր անհատները: Այ-  
սու ամենայնիւ անիկա երեք հիմնական ու ան-  
վիճելի առաքինութիւն ունի որ ամէն Կաթոլիկ  
հաւատացեալ կը կապէ Եկեղեցիին և ամէն ոչ-  
Կաթոլիկ ղէպ ի եկեղեցին պէտք է քաշէ:

(ա) Հասարի Եկեղեցին է: Բողոքականութիւնը  
առանձինն դատողութեան թոյլ տալով բանապաշ-  
տութեան և վիճարանութեան ճամբայ կը հարթէ,  
որով յարանուանական երկպառակութիւն ու տե-  
սակ տեսակ եկեղեցիներ կը ծնանի: Իսկ Կաթո-  
լիկութիւնը Եկեղեցի, մէկ եկեղեցի, Քրիստոսի ե-  
կեղեցին է, քանզի վիճարանութեան տեղ հաւատքը  
դրած է: Բողոքական միտքը՝ որ տրամաբանելով

ժամավաճառ կըլլայ և նորանոր բաներու կը հե-  
տամտի, միշտ անհանդարտ է յուզեալ ծովու նման,  
իսկ Կաթոլիկ սիրտը միշտ հանդարտ ու խաղաղ  
է, քանզի միանգամ ընդ միշտ սուրբերուն աւան-  
դուած հաւատքին անձնատուր եղած ըլլալուն  
չնորհիւ Աստուածային ճշմարտութեանց համոզու-  
մին մէջ անդրդուելի կը մնայ:

(բ) Մեղաորին Եկեղեցին է: Բողոքականութիւնը  
մեղաւոր անդամը կտրելով կը հանէ: Կաթոլիկու-  
թիւնը, ընդհակառակն, մեղաւորը բնաւ չարտաք-  
սեր, հապա զանիկա ողջագուրելով փրկութեան  
կ'առաջնորդէ: Անիկա Մագդաղենացի Մարիամնե-  
րու և Անառակ Որդիներու Եկեղեցին է: Փա՛ռք  
Աստուծոյ որ ասանկ ապաստան մը մատչելի ը-  
րած է ամէն մեղաւորի (եւ ո՞րս մեղաւոր չենք):  
Ոեւէ այր կամ կին, մեղքի մէջ որքան ալ խորա-  
սուզած ըլլայ, Եկեղեցիին խոստովանանքին և սըր-  
բազան խորհուրդներուն դիմելով իր հոգիին վըր-  
կութիւնը կրնայ ապահովել:

(գ) Սուբերոն Եկեղեցին է: Կաթոլիկութիւնը իր  
հիմնալի երկրպագութեամբը, խնկաբոյր ազօթք-  
ներովը ու երգերովը, սուրբ խորհուրդներուն մա-  
տակարարութեամբը սուրբ կեանքեր կը ստեղծէ  
այս ազտոտ աշխարհին մէջ: Ուրիշ ոեւէ կրօնքի  
մէջ Կաթոլիկ ջերմեռանդութեան ու սրբութեան  
համապատասխանող բան չկայ:

Արդ այս երեք պատճառները բուական ըլլա-  
լու են ամէն բանաւոր մարդ համոզելու Քրիս-  
տոսի միակ Եկեղեցիին գիրկը նետուելու:

Քարոզին ամփոփումը տուինք, սակայն քարո-  
զիչը, երիտասարդական աշխոյժով տօգորուած  
այդ սպիտակահեր ծերունին, նկարագրելու ան-  
կարող ենք: Թափանցիկ բարբառ, կորովի ոճ, վեհ-  
անձն շարժուածեւ, աւետարանչական եռանդ և ու-  
րիշ բարեմասնութիւններ ամէն բոպէ անոր ար-  
տասանութեանը մէջ ի հանդէս կու դային: Ունկն-  
դիր բազմութեան աչքն ու ականջը երեք քառորդ  
ժամ լարուած պահելէ ետքը զանոնք խոստովա-  
նանքի հրաւիրելով խօսքը վերջացուց:

Քարոզէն ետքը նստարանները նորէն դար-  
ձուեցան ղէպ ի խորանը որ հիմա լուսադարձուած  
էր: Կարճ ժամերգութեամբ մը ժողովը վերջացաւ:  
Նաեւ ծանուցուեցաւ որ հետեւեալ իրիկունը (որ  
Առաքելութեան վերջին օրն էր) «Պապին Անսխա-  
լականութիւնը» նիւթին վրայ պիտի քարոզուի:

Մենք առանց կրօնափոխ ըլլալու եկեղեցիէն  
եկանք ու եկանք: Այն իրիկունն սլաշտամուռնէն,  
սակայն շատ գոհ մնացինք անոր համար որ մեր  
լսած ու տեսած բաները՝ Կաթոլիկութեան թէ՛



# ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

1911 Տ Ա Ր Ի Ո Յ Ն

Ամերիկեան Աստուածաշնչի Ընկերութեան այն Գործակալութեան ղաջը կը պարունակէ Պուլկարիա, Եւրոպական Թուրքիա, Փոքր Ասիա, Սիւրիա, Պաղեստին, Եգիպտոս և Սուսան:

Գործին մատակարարութիւնը սեղմնեցու ալ և ալ պատճառներով 4910 — 1 ի ձեռնարկն նշանակելի խտուածութիւնը, հետախօսին համաճարակը, և ասոր հետևանքն եղող քառանթինները, քանի մը ամիս գրեթէ արգիլեցին ճամբորդութիւնը ինչ ինչ կողմեր: Նաև ընդհանուր աղքատութիւնը շարունակ աւելցած է, և ի վերջոյ ընդհանուր թշուառութիւնը մեծապէս ծանրացած է խտրական պատերազմին պատճառաւ:

Բացի այս արգիլքներէն, գրավածութեան գործողութիւնները ազատորէն և յաջողապէս յառաջ տարուած են, այցելութիւններ եղան շատ քաղաքներ և գիւղեր, ուր առաջ անկարելի կը թուէր այցելել: Ընդհանրապէս գրավածները քաղաքավարութեամբ ընդունուած են և նոյն իսկ օժանդակութիւն գտած են իրենց գործին մէջ: Անոնք զանազան շահեկան փորձառութիւններ ստացած են, որոնք կը լուսարանեն իրենց գործին հանդարտ, համեստ, բայց խորունկ ազդեցութիւնը: Մասնաւորապէս գոհացուցիչ է նշանակել Իսլամներուն ազնուութիւնը և նոյն իսկ ակնածանքը հանդէպ Սուրբ Գիրքին: Ինչ ինչ պարագաներու մէջ անոնք խոսիւ յանդիմանած են Քրիստոնէոյ կոչուածները թէ հանդէպ Աստուածաշնչին պատկառանքի մէջ կը թերանան, և թէ անոր նկատմամբ անոնց հաւատքը ծանծաղ է: Ինչպէս Իսլամներուն նոյնպէս նաև անուանական Քրիստոնէաներուն դէպ անհաւատութիւն հակուածին աւելնալը այս երկիրներուն մէջ ամենացաւառի բաներէն մին է ներկայ ժամանակներս:

Այս գործակալութեան 4911 Գեկտ. 31ին վերջացող 54 ամբիներուն մէջ տարածած Սուրբ Գիրքերուն համագումարը կը հասնի 3, 431, 421 օրինակներու:



1911 տարուան տարածուած Սուրբ Գիրքերն են 444, 160 օրինակ, հետեւեալ 29 լեզուներով . Արարերէն 81,829. Թուրքերէն 7,655. Հայերէնի ջոկը (Գրարար և Աշխարհաբար Հայերէն, Արարատեան, Հայաստա Թուրքերէն, Քրքերէն, նաև Հայաբառ և Թրքաբառ կոչներու յատուկ գիրքեր) 24,418. Յունարէն ջոկը (Հին և Նոր Յունարէն, Յունաստա Թուրքերէն) 8,169. Սլաւական ջոկը (Պուլկարերէն, Ռուսերէն, Սերպերէն և ըն.) 45,478. Եբրայեցիերէն և Եբրայաստա Սլաւներէն 2,416. Շուլլա (Սուտան) 4,000. և այլևայլ ուրիշ լեզուներով, փոքրամթիւ :

Այս գիրքերը տարածուած են (1) Գործակալութեան միջերանոցէն, Կ. Պոլիս, Պէյրութ և Աղեքսանդրիայէ 48,434 օրինակ, (2) Մխիթարներ և ուրիշ գործակիցներէ (որոնք կը ներկայացնեն 40 տարբեր աւաքելութիւններ և Աւետարանական կաղամկերպութիւններ) 26,434 օրինակ, (3) Գրավաճառներէ (Պուլկարիա 3, Փոքր Ասիա 28, Սիւրիա 1, Եգիպտոս 29, Սուտան 1) 69,295 օրինակ :

Գրավաճառներուն մէջ կը գտնուէին Հայեր, Պուլկարներ, Յոյներ, Սիւրիացիներ և Ղպտիներ : Անոնցմէ շատեր օգնական գրավաճառներ գործածած են, որոնց մեծ մասը ծախած են զոնազան քաղաքներու մէջ խանութներէ. և ոմանք ալ ճամբորդած են գիւղերը : Ասոնք կը կազմեն խումբ մը որուն մէջէն ապագայ գրավաճառներ կրնան ընտրուիլ երբ քաց տեղ մնայ :

Տարածուած աշխարհագրապէս եղած է սպլէն. Թուրքիա 48,948 օրինակ, Պուլկարիա 14,061 օրինակ, Եգիպտոս 36,043, Սուտան 4,000, Պարսկաստան 44, Ամերիկա 7,800 :

Բրիտանական Ընկերութեան ծախուած է 36,294 օրինակ, որոնք ըստ մեծի մասին տարածուած են Եւրոպական Թուրքիա և Եգիպտոս :

**Սուրբ Գիրքերը ստացուած են՝**

Կ. Պոլիս և Պէյրութ Գործակալութեան պատրաստածներէն	417,225	օրինակ
Նիւ Ետքը, Ընկերութիւններէ	2,700	»
Բրիտանական Ընկերութիւններէ և ուրիշներէ գնուած	24,734	»
	<hr/>	
	444,659	»

**Տպագրութիւն.** — Տպագրական գործը կատարելապէս աղատ է ու և է տեսակ սեզմումս : Պաշտօնական խիստ միջոցները որոնք հարկ դատուած են լրագիրներու հսկողութեան համար, մեղի չբալան ու և է կերպով :

Անցեալ տարուան մէջ հետեւեալները տպագրուած են .

Կ. Պոլիս, Հայերէն 42,000, Հայաստա Թուրքերէն 20,000, Յունաստա Թուրքերէն 7,000, Արարատա Թուրքերէն 40,000, Հայաստա Քրքերէն 20,000 :

Պէյրութ, Արարերէն 87,000 օրինակ :



**ԼՈՍՏՈՆ**, 80 օրինակ Յովհաննու Աւետարան Տաճկախօս Հայ կոյրե-  
րու համար. ընդամենայն 488,080 նոր գիրքեր տպագրուած են:

(**Ծափօրութիւն**. Հիմա ունինք, Հայտախօս և Տաճկախօս Հայոց  
Թուրքաց, Յունտախօս և Տաճկախօս Յունաց, կոյրերու յատուկ թէ՛ Մուշի և  
թէ՛ Պրայլի գրութեամբ պատրասուած Սուրբ Գրոց մատրէն որոնք ձրի կը  
տրուին կարգալ գիտցողներուն կամ սորվիլ ուղղողներուն)

**Ելեկտրատիպ** (կալվանօ) ջախսակներու պատրաստութիւն.  
Աւարտած ենք 763 նոր տախտակներ, որոնցմով այժմ՝ ի ձեռին ունինք հա-  
մագումար 47,000 տախտակներ:

Աշխարհի մէջ գլխաւոր Աստուածաշնչի Ընկերութիւններուն տարա-  
ծած գիրքերուն թիւը 1910ին հետեւեալն է մտաւորապէս.

Ամերիկեան Ընկերութիւններ. . . . .	3,234,722	օրինակ
Բրիտանական » . . . . .	9,797,530	»
Ֆրանսական » . . . . .	34,205	»
Գերմանական » . . . . .	792,404	»
Հոլանտական » . . . . .	94,430	»
Սկանտինաւեան » . . . . .	454,952	»
Չուեյցերական » . . . . .	28,344	»
	<u>44,430,287</u>	»

Այս գիրքերուն տարածումը աշխարհագրական տեսակետով հետեւ-  
եալն է մտաւորապէս. Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի մէջ 2,000,000,  
Մեծ Բրիտանիոյ մէջ 4,000,000, Չինաստանի մէջ 2,500,000, Քորեայի մէջ  
800,000, Գերմանիոյ մէջ 1,000,000, Ֆրանսայի մէջ 220,000, Հնդկաստանի  
մէջ 800,000, Ռուսիոյ մէջ 600,000, Թուրքիոյ մէջ 400,000, Եգիպտոսի մէջ  
75,000, Պակիստանի մէջ 46,000, և աւելի փոքր թիւեր զանազան ուրիշ հր-  
կիրներու մէջ: Բաց ասոնցմէ՝ հազարաւորներ հրատարակուած են անհատա-  
կան տպարաններէ մասնաւորապէս Անգղիա և Ամերիկա:

Հետագայ տախտակը կը ցուցնէ երկու մեծ Ընկերութիւններուն  
գործը:

	Ամեր. Աստուածաշնչի Ընկերութիւն	Բրիտ. և Արտասիւմ. Աստու. Ընկ.
Կազմակերպութեան տարին	1816	1804
1910ին հրատարակուած օրինակներ	3,568,174	6,975,886
Համագումար հրատարակութիւն սկիզբէն ի վեր	<u>95,527,904</u>	<u>229,000,000</u>
1910ի գործին համար ծախսուած է	467,469	274,994 Օսմ Ոսկի
Ծախսուածներէ ընդունուած	<u>48782</u>	<u>402,358</u> » »
Բացը ուրիշ աղբիւրներէ լեցուած	448,687	472,636

Ո՞րքէն լեցուած է այս բացը: Կատկներէ, եկեղեցիներէ, օժանդակ



ընկերութիւններէ, անհատներէ, մնայուն դրամագլուխներու տոկոսէ ևն. ևն. Այս տարի Սուրբ Գրոց տպագրութեան և տարածման համար, Գործակալութիւնս իբր 43,000 Օսմ. սօկի ծախս ըրած է. որուն 3,635 սօկին վաճառումներէ և 117,11 սօկին նուէրներէ և մնացածը ընկերութենէն ընդունուած է: Նուէրներուն մէկ մասը արուած են կոյրերու յատուկ պատրաստուած Սուրբ Գրոց համար:

### Ը Ն Գ Ո Ւ Ն Ո Ւ Ա Մ Ն Ո Ւ Է Ր Ն Ե Ր

	Օսմ. սօկի 100էն
<b>Անհասներ.</b> — Տիկին Հիւփֆէլտ Քէսըլէն (Գերմանիա)	54
Ս. Գիրքը սիրող աղաքներէ (Ֆելիպէ)	22
Տիկին Լուսի Լիպարիանէ (Պոլսո)	9
Տալհանէս էֆ Գուրուետնէ (Սէօլէլ)	37
Տօքթ. Քրիսթիէ (Թարսուս)	400
<b>Եկեղեցիներ.</b> — Սամաքոֆէն (Պուլկարիա)	105
Էմմանուէլէն 660, Յուշիաէն 110 (Կ. Պոլիս)	770
Սիվիլ Ճիէն 49, Գարատուրանէն 49 (Մարաշ)	38
Քէրպորանէն 9, Մարտինէն 116	125
Տարպէքերէն 226, Չընդուշէն 46, Ուրֆաէն 84	356
Թրիփօյիէն 400, Սիդոնէն 266 (Սիւրիա)	666
<b>Գրավաճառներու ձեռամբ.</b> — Տաճկաստանէն 5436,	
և Եգիպտոսէն 3993	9429
	Գումար 11741

### ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՅ ՁԵՌԱՄԲ ՀԱՒԱՔՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՈՒՑԱԿ

**Էրզրինկիեան.** Կ. Պարոնեանի ձեռամբ. — Հաղարբի Աւետ. Եկեղ. 20. Մորճիկեան ընտանիքներ 31,24. Վարի Բադառիճի Աւետ Եկեղ. 54. Վարժարանին 27 երկուս աշակերտներէն 40 և քսանըջոր եղբայրներէ և քոյրերէ 52: Գումար 167,25

**Արվազ.** Ա. Պաշպէօյլեքեանի ձեռամբ. — Բարեսէր սոն 40. Էնս-րէսէն Գէորգ Պաշպէօյլեքեան 20: Գումար 60

**Կարիւն.** — Թ. Պետրոսեանէ 40:

**Հալէպ.** Հաճի Գ. Ճիզմէճեանի ձեռամբ. — Աւետ. Եկեղ. 50, վարժարանի աշակերտներէն 15, Անանիոս Ճիզմէճեան և որդիք 35. Գումար 140



Պետրոս Կարապուչեան 20. ոմն  $\frac{1}{2}$  : Էկլպէլի. Աւետ. Ժաղովաւրդէն 54: Գու-  
մար 474, 50:

**Գաղասիա.** — 3. Էքշիեանի ձեռամբ 4 դճկն:

**Պիլիս.** — 8. Կաշագործեանի ձեռամբ իր ընտանիքէն 40 $\frac{1}{2}$  և ու-  
րիշ երկու անձէ 3 $\frac{1}{2}$ : Գումար 14:

**Տիարպէփր.** — 1. Տէր Ղազարեանի ձեռամբ, իր ընտանիքէն 25  
Հայ զինուորէ մը 5 $\frac{3}{4}$ . **Պ. Մանգէկի Աւետ.** Եկեղ. 8 $\frac{1}{2}$ . Պետրոս Մանուկ-  
եանէ և Կարապետ Յարութիւնեանէ Յական. տասնեակէ քոյրերէ 44 $\frac{1}{2}$ :  
**Ձնգուցի Աւետ.** Եկեղ. 25. Աննան Տաղակիւլեան, Մարիամ Աթթարեան,  
Թաբուշի Պուճիքանեան Յական. Գոյրերու ժողովէն 40. Վեց քոյրերէ 41.  
**Ռւերոն ցեիւրէն Մարիամ Խըտըրշահ, Ովաննա Թաղէտեան Յական. Հայ-**  
**ցիէն 2. Սելեբեկի Աւետ.** Եկեղ. 8. Ինն անձերէ 47 $\frac{1}{2}$ . Քրդերէն երգարան-  
ներու Հառոյթէն 40: **Տըպնէ. Աւետ.** Եկեղ. 48  $\frac{1}{4}$ : **Տէրէփ. Աւետ.** Եկե-  
ղեցիէն 40: Մկրթ, Պօղոս և Ալթուն Շամմուսեան, Չէնէ, Եղիսէ, Աղան և  
Պառն, Թովմասեան, Սաիա Խաղըրշահ Յական: **Քօրիքէն երեք անձերէ 5:**  
**Պալաւայէն չորս անձերէ 6 $\frac{1}{2}$ : Ֆարցիմ. Աւետ.** Եկեղեցիէն 40. Մարիամ  
Տօնպետեան 40: **Քիլիսէ Պատ. Պօղոսեան 5. Եկեղ. քանձնակէն 4 $\frac{1}{2}$ .**  
**Որբ մը 1: Արղընէն 3: Եպրօիէն 2: Բալուէն Պատ. Խ. Վարդանեան,**  
**Մանուկ Իբրըճեան Յական. Գէորգ Քիւրէճեան 40: Զեմուկ. Աւետ.**  
**Եկեղ. 40. տասնևվեց անձերէ 46, 25: Գումար 355 $\frac{3}{4}$**

**Խարբերդ. Յովհաննէս Ղազիլեանի ձեռամբ.** — Մէզիրէի Աւետ.  
Եկեղեցիէն 216. Յովհաննէս Ղազիլեան ընտանիքէն 95. Ստեփան Պօյաճեան  
40. Մկրտիչ Նաճարեան, Լեւոն Խոտիեան, Թուրքանտա Կարուկեան Յա-  
կան. ոմն 2: **Հիււէյցիկ. Աւետ.** Եկեղ. 29: **Մալաթիա.** Գառգար Պօնա-  
բարդեան 40. Սենեքէրիմ Պօնճուգեան, Թորգոմ Պիտեան, Իանիէլ Արբա-  
ճեան, Լեւոն Տէրէեան, Պետրոս Թուղճեան, Ալիքսան էֆ. Մերկոնտո Պար-  
սամեան, Փիլիպպոս Տէվէճեան, Սարգիս Փիլոյեան, Թէոթրոս Մաղմանեան,  
Վերանիքա Քէշիշեան, Հոսիփոմէ Թերիսանեան Յական. Եկեղեցւոյ գանձա-  
նակէ և երեք անձերէ 42: **Խուլայ գիւղ. Գէորգ Պօյաճեան, Յարութիւն**  
**Տօլաշեան, Աննա Տէր Սիմոնեան, Ալթուն Պապայեան, Եղիա Արմենակեան,**  
**Մխաբ Կիւլէսերեան, Պետրոս Մոլիկեան, Վարդուէի Թօփուղեան և աղջ-**  
**կանց վարժարանի աշակերտուհիներէն 40ական. աղայոց վարժարանի աշա-**  
**կերաններէն 44. Նաղըւ Տէր Կարապետեան 8. Աւետիս Էլլիկեան, Սահակ,**  
**Մինաս և Ալթուն Պապայեան, Պարսամ Մոսիկեան, Յակոբ և Արթոյ Մա-**  
**նոյեան, Օջանի Կարուկեան, Կիրակոս, Մարգար, Խոսակ և Խուճար Տէր**  
**Կարապետեան, Խաչատուր Մուրատեան, Եղեկիէլ և Փարէս Տէր Սիմոնեան,**  
**Խաչէր Թորոյեան, Մկրտիչ և Յարութիւն, Ռեփիկոյ, Մարթն, Արթոյ,**  
**Սուլթան և Պատարիան Գինոսեան, Յակոբ Տէր Մարկոսեան, Էլմաս Կիւլէ-**  
**սերեան, Սարգիս Իսէկեան, Հեղնար Նիշանեան, Թաբուշի Աւաքեան, Զար-**



Թար Արբաճատեան, Մարգրիտ Նարզիկեան, Օղիկ Տէր Ղազարոսեան, Աղապաղ Խատրեան, Եղսա Մուրատեան, Հեղնա Գ. Կարուկեան, Մարիամ 3. Կարուկեան 5ական: Գումար 713

**ՌՕՏՈՍՈՅՕ.** — Կ Պ. Ճինկեօղեանէ 15. Նաւրիձա Կ. Ճինկեօղեանէ 5: Գումար 20:

**Կեսարիա.** Ն Մասիչեանի ձեռամբ. — Ն. Մասիչեան 200. Իր տանը դանձանակէն 15. Մարիամ Քեչիչեան 15. ոմն 2: Բաւմիլիճ. Մանուկ Թօղթօնճապեանի ձեռամբ 15. բարեկամներէ 25: Զօմազը. Աւետ. Ժողովուրդէն 28 $\frac{1}{2}$ . Տէր Ներսէս 5, 23. Կարապետ Էլիքիւչիւբեան 5, 23: ԾԷՆԷ. սէ. Ժողովուրդէն 20: Հանիճ. Վարդեր Թափիկեանի ձեռամբ 41: Իւրճէն. Վիքթօր Անկրտեանի ձեռամբ 45, 75: Տէրէվանճ Թուրքմանաւա և Արսուէթ Կալճեանի ձեռամբ 35, 75: Թալաս. Գաբրիէլ Պետրոսեան 5: Մուսնըրցի. Աննիձա Տէվէլեանի ձեռամբ 40. Աննիձա Զօրուեան ի ձեռամբ 56, 50: Ազիզիյէ. Յովհաննէս Զանդեան 10. Լեւոն Տ. Խաչբեանի ձեռամբ, Ասպուճ Ճէսուրեան 40, Ռուփիկ Զանդեան 6 $\frac{1}{2}$ , Մարիամ Զանդեան, Արսուէթ Ճէսուրեան, Յարութիւն Ինէճեան, Նազարէթ Եազուպեան 5ական, Տիգրան Էրքիէթիւիեան 5 $\frac{1}{4}$  և ուրիշներէ 8 $\frac{1}{4}$ : Թալաս. Հոսիփիսէ Զալմալբեանի ձեռամբ 60. ոմն 14. ոմն 2 $\frac{1}{2}$ . Եղուարդ Վ. Քիւրքճեան տարր տարեկան պատանի մը Թերթերէն պատկերներ կարել ծախելով շահած 2 դահեկանը նուիրած է, ինքն ալ բաժին մը ունենալու փափաքով: ԵՒԻՐ զըլա. Գրիգոր Սլազլեանի ձեռամբ 166, 5. ոմն 2: Զօգրասան. Յովհաննէս Պապօեան 20: Թէվէն. բարեկամներէ 33, 75: Բում Գալպազ. բարեկամներէ 10 $\frac{1}{4}$ : Թաւրզ. Պապա Անտոն 20: Զար. Գարոնցական Նահապետի ձեռամբ 137: Տէնիլ. բարեկամներէ 43, 50: Մէնթէտ. Արտաշէսի և իր կնոջ ձեռամբ 100: Իւրճէն. բարեկամներէ 50: Եվէրէէ. Տիկ. Էլզիսի ձեռամբ 20: Գարա Կազուպի ժողովուրդէն 42 $\frac{1}{4}$ . Նաւրիձա Տ. Յարութիւնեանէ 5: Պարուն և Ոկտան վարժ. ձեռամբ 32: Թերզիլի. Հ. էֆ. և վարժուհի Նուրիի ձեռամբ 36: Պուրնգըլու. Գառնիկ էֆ ի ձեռամբ 31 $\frac{1}{2}$ : Էլլէնէ. Պր. Միհրան, Օհան և Մտաթէոս Այվազեանի ձեռամբ 143 $\frac{1}{4}$ : Գում գուլու. բարեկամներէ 80: Սաարը. բարեկամներէ 40: Մէլէզ. բարեկամներէ 45 $\frac{1}{4}$ : Սոււնուրլու. Վեր. Խաչատուրեանի ձեռամբ, Եկեղեցիէն 52. Միխայէլ Խըարը օղլու և Փեթրօքի Փափազօղլու 30ական: Ինիլիլի. Եկեղեցիէն 420. Եօզկասէն ոմն 4 $\frac{1}{2}$ : Մէնթէտ. Տէր Ղեւոնդ քահանայ 10: Թերզիլիէն ոմն 3: Պարիամ. Քէճեա Յարութիւնեանի ձեռամբ 100: Գումար 4978 $\frac{1}{4}$ :

**Մարզուան.** — Յ. Արապեանի ձեռամբ Աւետ. Եկեղեցիէն 52:

**Անդրիանուպոլիս.** — Յ. Եղիսեանի ձեռամբ, իր ընտանիքէն 25. բարեկամներէ 7: Գումար 32: Նաև Եօրկի Քօքօնիսէն 20:

**Ասարազար.** — Ա. Կճատիատիսի ձեռամբ՝ Ա. Կճատիատիս 143:



Սօֆիա Կճատիատիս 30. Մկրտիչ, Կարապետ և Զապէլ ճրկայեան, Ծօթաքիս և Մաղաւնի Կոկան, բարեկամներէ 10<sup>1</sup>/<sub>4</sub>: Պարտիզակէն Հեթում: Հրանդ, Յակոբ և Երանուհի Պատմաճեան 33, Կարապետ Տիւմէնճեան 5 և բարեկամներէ 5: Էփրզիէն Լիօնիսի Անտուէա օղլու 5 և բարեկամներէ 3: Սապանգաւէն Հոդէլճի Պօղոս 9: Պարտիզակէն Կոնստանտին Երզրիատիս 5: Ազիսաւէն Բենիամին Յովսէփեան 5 և բարեկամներէ 4: Գրննըլարէն Սիմոն Զաքարեան 5: Թամլըլէն Կարապետ Պաղասաարեան 5 և բարեկամներէ 7: Ալվըղ գիւղէն Եանքօ Եանաքիատիս 5 և բարեկամներէ 3: Շազ. Եազէն Աթաճան աղա 5: Էստրի Բէտիսէն ՅովՏաննէա Արշամ Թոմսեան 5: Փիրահալէսէն Թէոփիլոս Կերկարարեան 5: Արմաւէն Մինաս Գապագճեան 5 և բարեկամներէ 5: Տեօնէփլէրէն ճէլալ օղլու Պօղոս 5 և բարեկամներէ 3. նաև զանազան գիւղերէ 79, 75: Գումար 390 գՏկ.

**Ասանա.** — Ս. Այան օղլուի ձեռամբ՝ Յակոբ Քէրէքեան, Յարութիւն Աճէմեան, Կազճի Յակոբ, Յարութիւն Երբբգեան, Համբարձում աղա, Սուլթան Փալանճեան, Նազարէթ Նորթիկեան, Յարութիւն Եղիաեան 5<sup>1</sup>/<sub>4</sub>ական գՏկ. Կարապետ Աճէմեան, Յակոբ Փէմպէեան 6<sup>1</sup>/<sub>4</sub>ական գՏկ. ՅովՏաննէա Բարեղեան 8. Այլքան Մարաշեան 8<sup>1</sup>/<sub>4</sub>. Պատ. Աւետիս 9<sup>1</sup>/<sub>2</sub>. Համբարձում Մշճեան, Արմենակ Պուշագճեան 10ական. Տիգրան Կիւլէսերեան, Կիրակոս Ոսկանեան, Արէլ Չիլինկիրեան 10<sup>1</sup>/<sub>2</sub>ական. Նազարէթ Քիւրիշեան, Յակոբ Տօնապետեան, Թօնիկ Մարտիկեան 20ական. Ռ. Ռ. Աէյմ. պըրս 27. Տօթթ. Սալէպեան 40. Միս Աւէպի Կիրակոսիոսի զպրոցի աշակերտներէն 111 և բարեկամներէ 53: Իւրկիւպէն Երզրիս Անէսթ օղլու 108. Սէլէֆիլիէն կառապան Ռուբէն 5: Գումար 546<sup>1</sup>/<sub>2</sub>

**Իզմիր.** — Կ. Ապաճօղլուի ձեռամբ՝ Յոյն Աւետ. Եկեղ. 55. Մանհաւէն Յոյն Աւետ. Եկեղ. 54: Գումար 109 գՏկ.

**Կիւմիւլիքիւն.** — Թ. Աքէրի օղլու 10, և Լիւ ձեռամբ՝ Չէմպէրճի Աթէֆանաքի, Մկրտիչ Մելքոնեան, 10ական. Տօթթ. Կարապետ Երեմեան 30: Իսէլէէն Տիմիգրիոս Սիգօբուլոս, Ավրաամ Թալաս օղլու 20ական. Երբբք Ստեփան և Կարապետ 20. ՅովՏաննէա Գլլըճեան 5: Գումար 125:

**Տրապիզոն.** — Պ. Թօգաթլը օղլու 25, և Լիւ ձեռամբ՝ Յոյն Աւետ. Եկեղ. 65. Հայ Աւետ. Եկեղ. 10<sup>1</sup>/<sub>4</sub>. Բօլիբօնի Աֆանաւաթի, Տիմիգրիոս Գանթօբուլոս, Թէօտօրոս Անաստասիատիս 5ական. Կիրառոնէն բարեկամներէ 4: Գումար 149<sup>1</sup>/<sub>4</sub> գՏկ.

**Սամսոն.** — Մ. Փափազ օղլուի ձեռամբ՝ Աւետ. Եկեղ. 65. Եոզլան Բօրօֆ 20. Յարութիւն Հինդլեան 9. ԵօնՏանիս Խրիբիտու 5: Պաճրաւէն Վասիլաքի Աւաշ օղլու 7, Յակոբ Պայիմաիրեան 6, Միհրան Աւաքեան 5 և բարեկամներէ 6<sup>1</sup>/<sub>2</sub>: Ալաշամէն Միխայէլ Փափազ օղլու 87. Աւետ. Եկեղ. 58. Եվտօրիա, Անթէլիքի, ԷվէՅնիս և Գոսդանտինոս 5ական. բարեկամներէ 9: Գափուզ գայաւէն Աւետ. Եկեղ. 53<sup>3</sup>/<sub>4</sub>. Պատ. ՅովՏաննէա 5<sup>1</sup>/<sub>2</sub>: Զար-



Եւրոպական թորոս երատեան 5 և բարեկամներէ 2: Իւնիսէն Աւետ. Եկեղ. Կլիսս Մէյմարիտիս, Պայծառ Մէյմարիտու, Գարեգին Պամաճեան Յական և բարեկամներէ 47<sup>1/2</sup>: Գօզաղզէն Եօրկիս Խարալամպօս 10. Եօրտանիս Գօնօտանդինու 5 և բարեկամներէ 2<sup>3/4</sup>: Օրսուէն Յոյն. Աւետ. Եկեղ. 159. Հայ. Աւետ. Եկեղ. 4<sup>1/2</sup> և ոմն 3/4: Ծարսաէն Յոյն. Աւետ. Եկեղ. 148<sup>3/4</sup>: Դրեղորիս և Գօշկուն Եանի, Զաքարիաս, Լազարոս Բիքիլիտիս, Լազարոս Թէրզօբուլօս, Տէսրինա և Սօֆիա Գանթօրուլօս, Սթէմովինա Ալէքսանտրու, Եուհաննիս, Առաքաիլ, Ալէքսանդրոս Տէլիեանիտիս Յական և բարեկամներէ 2<sup>1/2</sup>: Զաբու հառանէն Բիրեաքոս Եօրկիու 15: Կէօլ գիւղէն Եուհաննիս Դարալամպօս 60. Բիրեաքի Դարալամպօս, Դարալամպօս Եօրկիու Յական, բարեկամէ մը 1: Գումար 900<sup>1/2</sup> դճկ.

Ծանօթ. Կը խնդրուի Գրավաճառներէն և ուրիշներէ ալ որ նուիրատուներուն անունները և տեղերը որոշ գրեն, որպէս զի սխալներ չըլլան. եթէ սխալներ կան, յակամայս եղած են:





գորութեան թէ՛ տկարութեան աղբւրնները յստակ-  
օրէն տեսնելու համար մեզի պատուական առիթ  
մը ընծայեցին: Երկու բանի սնդամ մըն ալ հա-  
մողուեցանք:

Ամերիկայի կաթոլիկութիւնը Իտալիայի կա-  
թոլիկութենէն քիչուշատ տարբեր է: Միջովայրը  
Եկեղեցիին վրայ յայտնապէս կը ներգործէ: Հան-  
րապետութեան երկիրը Եկեղեցիին վրայ նոր կեր-  
պեր, ձևեր ու մեթոտներ կը հագուեցնէ: Կաթո-  
լիկութիւնը կամայ ակամայ լուսաւորեալ ու ա-  
զատագրուած Հանրային Կարծիքին բարեփոխիչ  
աղղեցութեանը տեղի կու տայ: Բարեկարգութիւն  
բառը գործածելու չենք համարձակիր: Բայց գոնէ  
ձեւափոխութեան գործողութեան մը ապացոյց-  
ները կը նշմարուին: Այդ կիրակի իրիկուան պաշ-  
տամունքին գոնէ ձեւը Նոր Աշխարհէն և բարե-  
կարգեալ եկեղեցիէն փոխ առնուած էր:

Կաթոլիկութեան ոգին, սակայն, անփոփոխ կը  
մնայ: Ամերիկայի կաթոլիկութիւնը նոր զգեստ  
հագած հին մարդն է: Վարչական դրութիւնը, հիմ-  
նական վարդապետութիւնները, գործելու ուղղու-  
թիւնը, տիրապետող ոգին նոյնը կը մնան: Կա-  
թոլիկութիւնը Հանրապետութեան հողին վրայ  
տնկուած եկեղեցական միապետութիւն մըն է:  
Քսաներորդ դարուն մէջ միջնադարեայ բարբառով  
խօսող դրութիւն մըն է: Աստուծոյ ու մարդուն  
միջեւ միջնորդելու յաւակնութեամբը ապրող զօ-  
րութիւն մըն է: Վերջապէս կաթոլիկութիւնը, Եւ-  
րոպա ըլլալ թէ Ամերիկա, տասնըվեցերորդ դա-  
րուն բարեկարգիչներուն ճանչցած կրօնքն է, որ  
անկէ ի վեր ունէ էական կէտի մէջ բարեփոխում  
կրած չէ: Ամերիկայի ոգին իսկ անոր սրտին չէ  
կրցած թափանցել:

Նիւ Եորք

Մ. Կ. ՓԱՓԱՋԱՆ

**ԳԵՐՄԱՆԱՅԻ ՀԱՅԱՍՏԵՐՆԵՐԸ**

Հայերէս շատերուն արդէն ծանօթ է «Տէօյչըր»  
Հիւլֆուպուճա կոչուած Գերմանական միսիոնարու-  
թիւնը: Ասիկա կը կազմուի ճիշտ Հայոց 1896ի կո-  
տորածէն ետքը, նպատակ ունենալով միայն նիւ-  
թապէս օգնել դժբախտ Հայ ժողովրդեան: Բայց  
այս ձեռնարկը, որոյ նախագահը և հիմնադիրը Գերա-  
պատիւ Փասթոր Էրնսթ Լոման է, հակառակ իր  
դէմ ունեցած շատ մը խօշընդոտաներու, աստիճա-  
նաբար կը ծաւալի և միսիոնարական ձեւ մը կը  
ստանայ: Այժմ ան մեր երկրին մէջ շատ մը մեծ որ-  
բանոցներ և դպրոցներ հաստատելէ զատ, ուրա-  
խութեամբ կը ծանուցանենք որ Տէօյչըր Հիւլֆու-  
պուճա յաջողեցաւ նաեւ իր նախագահ Փասթոր  
Լոմանի ջանքերով միսիոնարական ձեւարան մը

հաստատել Պերլինէ քիչ մը հեռու Փոայէնվալտէ  
փոքրիկ քաղաքին մօտ Ուխտէնհակէն կոչուած  
վայրը:

Այս ձեւարանին մէջ պիտի պատրաստուին  
մարդիկ, թէ՛ ընիկ և թէ՛ Հայ, իբր միսիոնարական  
ուսուցիչ և կամ աւետարանիչ ծառայելու Հայաս-  
տանի և տեղւոյն համար: Անցեալ Փետր. 13ին  
տեղի ունեցաւ այս նորակառոյց շէնքին հանդէսը.  
հոն հրաւիրուած էին Տէօյչըր Հիւլֆուպուճաի գըւ-  
խաւոր անդամները, որոնք Գերմանիոյ մէջ կա-  
րեւոր դիրք կը գրաւեն: Այս նուիրման հանդէսը  
թէպէտև պարզ, բայց միեւնոյն ատեն շատ մեծ  
աղղեցութիւն թողուց ներկայ եղողներուն վրայ:  
Երգեցողութիւնք և բանախօսութիւնները զիրար  
կը փոխանակէին: Բնականաբար հոս բոլոր խոր-  
հրդակցութիւնք Հայաստանի շուրջ կը դառնային:

Հոս սկսաւ Հէրր Ֆոն Տոպպէլէր (Մուշի մի-  
սիոնարը) Հայոց վրայ շատ գովեստով խօսել: Փոն  
Տոպպէլէր պատմեց գահընկէց Համիտի փլանը Հա-  
յոց հանդէպ, թէ ի՞նչպէս Ազատութենէն առաջ  
կառավարութիւնը նպատակ ըրած էր Մուշի Հա-  
յերը ջնջելով և հեռացնելով Մահմետական տար-  
րերը, Քուրդերը և Ռուսաստանցի Չէրքէզները ա-  
նոնց տեղ բնակեցնել: Հէրր Փոն Տոպպէլէր վկա-  
յեց նաեւ որ Հայերը արդարեւ խելացի ազգ մըն  
են, թէ այս ժողովուրդը մեծ հաստատակամու-  
թիւն ու բաւական զարգացում ալ ունի, որ իր  
կրօնին կը պարտի, ինչպէս նաեւ իր ազգային գո-  
յութիւնը:

Հայ Դաշնակցութեան մասին ալ խօսելով, վե-  
րոյշնեալ պարոնը, շեշտեց թէ Դաշնակցութիւնը  
կրնար մեծ օրհնութիւն մը ըլլալ Հայ ազգին, ե-  
թէ ազգին կրօնական զգացումներուն չդպչէր և  
Աստուծոյ աջակցութեամբ գործէր:

Հանդէսը վերջացաւ միսիոնարութեան նախա-  
դահ Փասթոր Լոմանի շնորհակալական լուրջ խօս-  
քերով որ խոր տպաւորութիւն մը թողուցին ուն-  
կընդիրներուն վրայ:

Շատ հետաքրքրաշարժ էր լսել նաեւ «Տէօյչըր  
Հիւլֆուպուճաի անդամներուն մտերմական խօսակ-  
ցութիւնը որ տեղի ունեցաւ հանդէսէն վերջ: Հոս  
դատարանի խորհրդապետ յարգելի Տր. Շուխարթ,  
խօսքը Փասթոր Լոմանի ուղղելով, իր խորին  
շնորհակալութիւնը յայտնեց անոր, որ նա ինք-  
զինքը բոլորովին այդ սուրբ գործին նուիրած է(\*):

(\* Փասթոր Լոման ոչ մէկ տեղէ վարձք չըս-  
տանալէ և իր կեանքը այս վսեմ նպատակին նուիր-  
ելէ զատ, լրածիս համեմատ Տէրոջ իրեն պար-  
գեւած հարստութենէն ալ կը նուիրէ Հայաստանի  
թշուառներուն:



Տր. Շուխարթ յիշեցուց Փասթոր Լոմանի թէ Ինչպէս նա Հայոց 1896ի մեծ կոտորածին առթիւ իրեն գալով մեծ եռանդով մը կ'առաջարկէր կոչ մը ընել և ամբողջ Գերմանիոյ մէջ Հայաստանի համար դրամ հաւաքել:

Այդ ժամանակ Տէօյչըր Հիւլֆսպուլուստ ուզած էր նաեւ մարդ զրկել Հայաստանու Բայց ամէն կողմէ անազին դժուարութիւններ կային իրենց առջև, նոյն իսկ Թուրք կառավարութիւնէն: Ուստի Տր. Շուխարթ պատմեց որ իրենք այս խնդրոյն նկատմամբ Տէրոյմէ պատգամ մը ստանալու համար Աբ. Գիրքը բանալով, երեք անգամ ալ դանազան տեղերու և տարբեր ժամանակի մէջ, միշտ միեւնոյն տեղին կը հանդիպին, այսինքն Սաղ. Իէ. Գլխ. «Տէրը իմ լոյս ու փրկութիւնս է, ես ուրկէ՞ պիտի վախնամ. Տէրը իմ կեանքիս ապաւէնն է, ես ուրկէ՞ պիտի դողամ»: Այս դէպքը վերոյիշեալ աստուածավախ անձնաւորութեանց մեծ քաջալերութիւն պատճառեց:

Տր. Շուխարթէ ետքը, քանի մը խօսք ալ իր եղբայրը Տիրէքթոր Շուխարթ խօսեցաւ: Յարգելի Տիրէքթորը Տէօյչըր Հիւլֆսպուլուստի ընդհանուր վերատեսուչ ըլլալով երեք անգամ Հայաստան պտոյտներ կատարած և տեղւոյն վիճակին ականատես եղած է: Յարգելի Տիրէքթորը Հայաստանի մէջ անձամբ տեսած թշուառութիւնները համառօտակի պատմելէ ետքը եղբակացուց թէ Տէօյչըր Հիւլֆսպուլուստի միջոցաւ Տէրը ոչ միայն Հայաստանը օրհնած է, այլ նաեւ Գերմանիան, զանազան միաքանութիւններ իրարու հետ կապելով և Աստուծոյ խօսքը միշտ հոս ու հոն քարոզելով և ժողովուրդը միշտ արթուն պահելով:

Առայժմ այս միսիոնարական ձեւարանին մէջ 12 ուսանողներ կան, որոնցմէ երեքը Հայ են:

Կը մաղթենք ի սրտէ որ Տէրը այս նորահաստատ ձեւարանը օրհնելով իր գործին համար ճշմարիտ աւետարանիչներ ու գործիչներ պատրաստէ անոր մէջ:

Ուխթէնհակէն ԱՆՈՐԱՆԻԿ Մ. ԿԻՐՈՅԵԱՆ

ՀԱՒԱՏՔԻ ԱՐԳԻ ԴԻԻՅԱԶՈՒՆՆԵՐԸ  
ՎԵՏԵՐ ԿԵՆՖԷԼ

Երբ զիւցազուն կ'ըսենք, սովորաբար կ'ենթադրենք այնպիսի մարդիկ՝ որոնք արիւննաշաղախ սուրերով, գետին փոռած զիւղներու վրայէն, վրիժախանձ կը հալածեն փախչող թշնամիները, կամ գէթ այնպիսի կիներ և էրիկմարդիկ որոնք արտաքոյ կարգի գրեթէ գերմարդկային գործեր կատարած են:

Սակայն զիւցազուն չենք կարծեր այն աղքատ կիներ, որ քիչ մը եկամուտով ի վիճակի եղած է եօթը կամ ութը հոգիներ գոհացնել, որուն անձնագոհութիւնն ու անձնաւորութիւնը Յիշատակարան մը կ'արժեն արդարապէս, քանզի անկապալ իր կարգին զիւցազուն մըն է: Նոյնպէս զիւցազ մը չենք սեպեր այն գործաւոր հնոցպանը, որ մինչդեռ մարդիկ շողենաւին առաջնակարգ սրածը բազմած կը զուարճանան, ան վարը մուրթ ու ըստօրնադոյն տեղը, անարկու ջերմութեան առջև կամ հնոցը ածուխ կը նետէ, կամ անոր կրակը կը խառնէ: Ան ալ նոյնպէս իր կարգին զիւցազուն մըն է, քանզի թէեւ անոր մասին աշխարհի պատմութիւնը բան մը չարձանագրեր, բայց այսու ամենայնիւ իր բոլոր ոյժը՝ գուցէ իր կեանքն ալ արդի քաղաքակիրթ աշխարհի մարդկութեան ծառայելու գործին նուիրած է: Ամէն վիճակի և ամէն կերպ կեանքի ուղղութեան մէջ գտնուած են արիասիրտ, հաստատամիտ և մեծանձն զիւցազուններ, որոնք պատրաստ եղած են նուիրել իրենց անձն ու ինչքը ի նպաստ բարի գործի մը ծառայութեան, նաեւ ի յարկին այդ նպատակին համար սիրայօժար գոհուելու: Անշուշտ աշխարհ այսպիսիներու անունը միշտ չնշապկեր և անոնց գործերը բեմերու վրայէն չքարոզեր, բայց ծածուկը տեսնողը կը ճանչնայ զանոնք և ժամանակին՝ արժանավայել վարձք պիտի չնորէ անոնց հաւատարմութեանն ու անձնաւորութեանը համար:

Ահա այսպիսիներու կարգէն էր նաեւ Վիլֆրէտ Կրինֆէլ զիւցազունը, որուն ներքին մեծութիւնը վիթարի կերպարանքով ի յայտ չգար, և որուն գործերը սուրով կամ արիւնով չահուած ալ չեն, այլ լոկ մարդասիրական, և կատարեալ լոռութեան մէջ կատարուած գործեր են: Անոր բոլոր կարողութիւնները և ամբողջ կեանքը, միմիայն Յիսուսի անունով, մարդկութեան ծառայելու գործին նուիրուած են: Լապրատորի պարզ և խեղճուկ կահաւորուած տնակի մը մէջ կը գտնենք զանկիւս: Անկէ քիչ մը հեռուն նստած է իր կիներ որ հազիւ քանի մը ամսուան փոքրիկ մանկիկը կը խնամէ: Բայց երջանիկ ընտանիք: Արդէն այսպիսի բարձրագոյն երջանկութեան վայր մը երկրի վրայ որեւէ տեղ այնքան չգտնուիր որքան իրապէս Քրիստոսնայ եղող խաղաղ ընտանիքի մը մէջ, Բարի Վարդապետը ուր ալ գտնուի, թող հիւսիսային ցուրտ կամ հարաւային տաք կլիմային մէջ սպրի այնպիսի մէկը: Ինչ կը տիրէ կատարեալ խաղաղութիւն և ճշմարիտ երջանկութիւն:

Ահա, յանկարծ զուռը կը զարնուի: Ես կիմացի!



մը ներս կը մտնէ : Տխուր լրարեր մը, որուն որդւոյն ոտքը հրացանի դնդակով մը գէշ կերպով վիրաւորուած է : «Կ'աղաչեմ,» կ'ըսէ, «եկուր ևօգնէ անոր :» «Գիւղը շատ հեռո՞ւ է,» կը հարցնէ : «Նաւամատոյցէն 50 մղոն անդին է,» կը պատասխանէ : «Գիտին սառը ապահո՞վ է :» «Ո՛չ,» կ'ըսէ, «այնքան վտահելի չէ :» Կրինֆէլ գիտէ վտանգին մեծութիւնը : Կ'ուզէ երթալ — բայց գուցէ վերստին ա՛լ չտեսնէ իր սիրելի ընտանիքը : Վայրկեան մը կը խորհի : Իր հաւատացեալ կիներ կը նշմարէ անոր երկմտութիւնը և իր ամուսնոյն քով երթալով հաստատ որոշմամբ մը ականջին կ'ըսէ, «Կրինֆէլ, ան որ հայրը կամ մայրը, եղբայրը կամ քոյրը, տղան կամ կինը ինձմէ աւելի կը սիրէ, ինձի արժանի չէ :» Փորձութիւնը վերջացաւ : Անմիջապէս կը պատրաստուի ճամբորդութեան : Կը համբուրէ իր կիներն ու տղեկը և ձմրան սաստիկ ցուրտ գեշերով տունէն դուրս կ'ելլէ : Դէպ ի այդ պարզ և երջանիկ տան վրայ նայուածք մըն ալ կը նետէ, կրկին համառօտ աղօթք մը ընելով, «Տէր, դուն պաշտպանէ իմիններս,» և կը յառաջանայ դէպի իր նպատակակէտը : Մինչդեռ վտանգաւոր, բարակ սառած ուղիէն կ'անցնի, հիւսիսային փայլուն աստղերը, միւս աշխարհէն, հազարաւոր ողջոյններ կը բերեն, և անա դարձեալ կը յուզուի : Բայց կրկին ներսէն մեղմ ու կամաց ձայնով կ'ըսէ, «Ահա կու գամ ես, ով Աստուած, քու կամքդ կատարելու» (Երբ. Ժ. 7) : Երբ վերջապէս երկար ու դժուարին ճամբորդութենէ մը ետք, տունը կը հասնի, կը գտնէ խեղճ հիւանդը : Կը մեղմացնէ անոր ցաւերը և կը կապէ անոր վէրքերը : Երբ հիւանդը գոհ նայուածքով մը, և սրտազին անոր ձեռքը սեղմելով ողջերթ կը մաղթէ, «Ահա հող կը լսէ Փրկչին ձայնը՝ որ կարծես թէ սուրբ ձեռքերը իր ուսերուն վրայ դրած կ'ըսէ : «Կրինֆէլ, ինչ որ աս իմ եղբայրներուս պիտո պգտիկներուն մէկուն ըրիք, ինձի ըրիք :» Այսպէս կը զգայ թէ հազարապատիկ ու բիւրապատիկ վարձատրուեցաւ իր յոգնութիւնն ու անձնուրութիւնը :

Վիֆրէտ Կրինֆէլ Օքսֆորտի համալսարանէն, 1907ի Մայիսին, բժշկութեան ուսումը կատարելագործելով կը ստանայ Տոքթոր տիտղոսը : Ասիկա անանկ մեծարանք մըն էր, որուն անկէ առաջ այդ համալսարանին մէջ ոչ ոք արժանացած էր : Տարի մը առաջ ևւս Անգղիոյ Թագաւորը արդէն անոր Աբ. Միքայէլի և Գէորգի պատուանշանը պարգեւած էր :

Կրինֆէլ 43 տարեկան եղած էր և վախին ինչ ըլլալը երեսք չէր գիտցած : Անյաջողութիւնը զին-

քը չէր վհատեցներ : Զանիկա յառաջ մղող կենաց զօրութիւնը լոկ իր պարզ Բրիտանոնէական հաւատքն էր : Պատանեկութիւնը անցուց իր ծննդավայրին Փարք Կէյթի մէջ, Զէսթըրի մօտ : Առոյգ ու զուարթադէմ պատանի մըն էր : Իր դպրոցական դասերը ա՛լ աւելի սիրալոթար կը պատրաստէր խնձորենիին տակ քան այն նեղ սենեակին մէջ : Աւելի նախամեծար կը համարէր իր ազատ ժամերը ծովեզերքն ու դաշտերը անցնել : Թէպէտ մանկութենէն տկարակազմ, բայց յիշեալ միջոցները գործածելով իր ապագայ կեանքին զօրաւորագոյն գործունէութեան հիմը դրաւ :

Երբ դուք, սիրելի ծնողք, ունիք մանչ մը որ քիչ մը ուշ տուն կու գայ, շուներուն հետ կը խաղայ, կամ կատուները վախերնուն անկէ տասը քայլ հեռու կը փախչին — զաւակ մը որ ինքզինքը առոյգ կերպով մօրը գիրկը նետելով՝ մօրը ոսկորները կը ճարձատեցնէ, և զլխարկը կամ հանդերձը սենեակին որեւէ անկիւնը նետած, ախորժանօք իրարու ետեւէ քանի մը պնակ կերակուր կը սպառէ — այդպիսի զաւակ մը խիստ ծայրայեղութեամբ մի դատէք : Ատ տղային մէջ պահուած կեանք կայ : Բարին Աստուած իր սուրբ շնորհքով կարող է փրկել զանիկա և մարդկութեան ծառայութեան գործածել : Անկէ շատ յոյս կայ :

Սակայն, երբ տղայ մը կ'ուսնենաք որ տխուր ու դեղնած դէմք մը ունի, շուներն անգամ կը վախնայ ու կատուն անոր կրունկը կը լզէ, ճաշի ժամանակ ոնդախօսութեամբ կ'ըսէ, «Մայր, աս չեմ ուտեր, ան չեմ ուտեր . . . » ասանկին համար ցաւ ըրէք : Ատանկ տղայ մը ոչինչ կ'ըլլայ : Նոյնիսկ Աստուծոյ շնորհքը չէ կարող անոր Կեռ գործ մը սկսիլ : Եթէ, հոս հանդարտութիւնով հարցնենք, «Որո՞ւնն է մեղքը, ասո՞ր թէ իր ծնողացը,» հոս չյարմարի Յիսուսի պատասխանը, «Ոչ ատորն է մեղքը, ոչ ալ իր ծնողացը, հապա որ Աստուծոյ գործքերը անոր վրայ յայտնի ըլլան :» որովհետեւ եթէ երբեք անիկա Բրիտանոնեայ ալ ըլլայ, հաշմանդամ մէկը միայն պիտի ըլլայ :

Կրինֆէլի թէ՛ հօր և թէ՛ մօր կողմէ նախնիքն ալ քաջ, արիասիրտ, յարատեւող և իմացական բարձր կարողութիւն ունեցող այրեր ու կիներ եղած են : Յիշեալ յատկութեանց ամէնէն ալ բարձր աստիճանաւ կը գտնուէին Կրինֆէլի քով : Երբ ան իր նախնական ուսումը Փարք Կէյթի մէջ աւարտեց, զնաց Մարլպորտի գոլէճը, ուր երեք տարի ուսաւ : Ան յաջող էր իր դասերուն մէջ և գօտեմարտութեան մէջ ալ սովորաբար առաջինն էր : Հիւմա ալ ան դեռ բարեկամ է ֆուրգուի և ուրիշ



գոյէճական խաղերու : Այնուհետեւ Լոնտոնի համալսարանին ու հիւանդանոցին մէջ բժշկութիւն սորվեցաւ : Հոն ծանօթացաւ Ֆրէտէրիք Թրէվլաի հետ ու շատ մտերիմ բարեկամութիւն մը հաստատեց անոր հետ :

Ճիշդ այս ատենները՝ Աւետարանիչ Մուտիի հանդիպեցաւ և անոր քարոզութեանը միջոցաւ Քրիստոսի առաջնորդուեցաւ : Կանուխէն մեծ հակերութիւն ունէր Քրիստոնէութեան հանդէպ : Ան կ'ըսէր իր ընկերներուն, «Միայն վախկոտներն են որ կիրակնօրեայ Դպրոց կը յաճախեն, որպէս զի երկինք երթալու հրամանագիր մը ստանան : Ուժեղներն ու զօրաւորները հոն երբեք չեն յաճախեր : Օր մը սակայն, երբ ժողովարարէն ներս մտաւ, ուր արդէն Մուտի կը քարոզէր, ամպիրոնին առջեւ անանկ մարդիկ տեսաւ որ ֆոֆոլ խաղացողաց շրջանակին մէջ շատ նշանաւոր էին և որոնց մարմնական ոյժն ու դատեմարտիկի փորձերը աշխարհահռչակ էին : Ուստի ըսաւ, «Եթէ այս անձերը արժանի կը համարին Քրիստոնէութեան ազդեցութեան նուիրուիլ, ուրեմն ես ալ պէտք է որ նուիրուիմ, Դուրս ելաւ և ինքզինքը Քրիստոսի նուիրեց, և ճիշդ այն ժամէն սկսեալ հաւատարմաբար, լաւագոյն ու ներքին ընծայուեմով, Աստուծոյ ծառայեց : Հեռատես ու սուր նայուածքով մը դիտեց որ մարդ իր Աստուծոյն չկրնար ծառայել առանց իր ընկերը իր անձին պէս սիրելու : Ու իր եռանդուն ու տեւական աղօթքը եղաւ հետեւեալը : «Տէր, ինչ կ'ուզես որ ընեմ :» Կիրակնօրեայ Դպրոցին մէջ իբր ուսուցիչ պաշտօն մը ուրախութեամբ ստանձեց. աշխատեցաւ լաւագոյն կերպով աշակերտները զբաղեցնել ու հետաքրքրել : Քիչ վերջը նշմարեց սակայն որ աշակերտաց հետաքրքրութիւնը հետզհետէ կը պակսի : Երբ նկատեց որ աշակերտները Սամսոնի, Դաւիթի ու Գողիաթի պատմութիւններովն ալիւս չեն հետաքրքրուիր, սկսեց անոնց կուփամարտութիւն ու թրախաղութիւն սորվեցնել : Ահա նորէն աշակերտաց հետաքրքրութիւնը շտացաւ . բայց Կիրակնօրեայ Դպրոցին տեսուչը անոր անցագիր տուաւ . . . : Յետոյ հիմնեց «Մանչոց Վաչա» հաստատութիւն մը և Անդղիոյ մէջ երեսէ ինկած մանչերը հաւաքելով՝ անոնց մեծ օրհնութիւն եղաւ : Կրինֆէլ մարդոց հանդէպ անյաղթ կարեկցութիւն ունեցաւ, բայց մանաւանդ նախամեծար համարեց մանչերը :

Երիտասարդ բարեկամներս, ահա ճիշդ աս է արդի ճշմարիտ Քրիստոնեաներուն պատկերը : Կայտառ ու զուարթ երիտասարդ մը իր ամբողջ կեանքը Տէրոջը ծառայութեան մէջ անցուց : Անոր ա-

մենամեծ ուրախութիւնն էր այլոց որեւէ կերպով օգտակար ըլլալ : Մեր ժամանակուան ամենամեծ մեղքը ան է որ մարդիկ իրենց հաճոյքն ու զուարճութիւնը աշխարհային իրերու մէջ կը փնտռեն աւելի քան մարդոց մէջ : Այն երիտասարդը որ դառնագին միջոցներով ստացած դրամը, գոլորշիներով լեցուն, ստորին թատրոններու այցելութիւններ տալով կը վատնէ, կամ այն օրիորդը որ աւելի հաճոյք կը գտնէ գայթ ի գայթ հանդերձներու կամ նորածեւ զխարկներու մէջ քան խեղճ անօթիին կտոր մը հաց տալու, մերկը հագուեցունելու, հիւանդին այցելութիւն տալու մէջ, այնպիսիներ, ոչ Քրիստոնէութեան միտքը հասկցած և ո՛չ ալ Քրիստոնէութեան ա. ք. քը սորված են, եթէ նոյն իսկ եկեղեցւոյ անդամ, Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչ կամ Ե. Ք. Ը.ի մէջ մեծ դեր խաղացած ըլլան :

Երբ Կրինֆէլ Օքսֆորտ կը գտնուէր, հոգ արքայական գոյէճին մէջ, կեանքը շատ զեղիս ու շույլ գտաւ, ժամանակ մը իր բժշկական ուսումը ինքնօգնութեամբ յառաջ տարաւ : Անիկա անանկ զիրքի մը կը փափաքէր, որ իր արտատոմոր հաճոյքին՝ մարդոց օգնելու հակուսին՝ լաւագոյն գոհացում տար : Անոր Ֆրէտէրիք բարեկամը խորհուրդ տուաւ իրեն միսիոնարական ծառայութեան մէջ մտնել : Ինքը արդէն «Մովային Միսիոնարութիւն» կոչուած ընկերութեան անդամ էր, թելադրեց որ աս ընկերութեան մէջ մտնէ :

Երանի այն երիտասարդին որ աղէկ բուրեկամ մը ունիւ ճշմարիտ բարեկամը խիստ հազուադիւրէ կերկրէս վրայ, ինչպէս Նոյնմբեր ամսուն մէջ վարդը, Երբ մէկը այսպիսի բարեկամ մը կը գտնէ, անոր շքեղութիւնը Յունիս ամսոյ մէջ բացուած վարդէն շատ աւելի սիրուն ու վառաւոր կ'ըլլայ : Մեր բարեկամները չեն անոնք որ այս կեանքը մեզի հետ կը վայելեն, այլ անոնք են մեր ճշմարիտ բարեկամները՝ որոնց միջոցաւ լաւագոյն ձրգտումի ու բարձրագոյն նպատակի մը կ'առաջնորդուինք :

Աշխարհիս վրայ գուցէ հիւսիսային ծովեզերքը բնակող ձկնորսներուն չափ ինկած մարդիկ հաղիւ գտնուին, և թերեւս մէկը չուզեր ասանկ վտանատաւոր տեղ մը առաքելական գործերով զբաղիլ : Սակայն գործը անհրաժեշտ էր, և առանց շատ խորհելու, Կրինֆէլ տեսաւ իր բարի Վարդապետին կամքը կատարելու պատենութիւնը և անմիջապէս գնաց գործին զուխը : Քիչ ժամանակուան մէջ Աստուծոյ օգնութեամբ յաջողեցաւ այդ խեղճ, ինկած մարդիկը, որոնք խաղամոլութեամբ



ու արեւցոլթեամբ կ'ոչնչանային, խօսքով ու խորհուրդով լաւագոյն ու բարձրագոյն կեանքի մը առաջնորդել: Արդ անխոնջ կերպով աշխատեցաւ և հաղարաւոր վտանգներու դիմադրեց:

Ո՛հ, որքան բազմաթիւ են արդի երիտասարդութեան ձգտումներն ու ցանկութիւնները: Երբ մէկը դժուարագոյն գործ մը կատարէ, հանգըտութեան ժամուն բոլոր սրտով կ'ուրախանայ: Նախ պէտք է մարդիկ երջանիկ ընել, այնուհետեւ գործին զուարճութիւնն ու վայելքը արդէն կուզան: Ծուլութիւնն ու հացկատակութիւնը այսօրուան օրս երբեք ներելի չեն: Բնաւ տարբերութիւն չընէր թէ Տէրը մեզ ո՛ւր դրած է, շուկա՛ն թէ տունը, դպրոցը թէ եկեղեցին: Մարմինը հանգըտութեան վարժեցնելը և կեանքին դժուարութիւններէն խոյս տալը վատութիւն է:

(Շարանայեւթ)

Նիկոմիդիա

Թարգմ. Յ. Պ. ԳՍՌՆԻԿԵԱՆ

ՕՍՄԱՆԻՑԷԻ

«ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԵԿԵՂԵՅԻ»ԻՆ ՀԱՄԱՐ

ՆՊԱՍՏԵՐ

Այս անգամ ալ կը փափաքինք ծանուցանել Օսմանիէի «Յիշատակարան Եկեղեցի»ին համար ընդունուած նոր նպաստները և նորէն օգնութիւն խնդրել այնպիսի բարեկամներէ, որոնք դեռ իրենց բաժին ինկած քարը չեն դրած այս Յիշատակարանին պատերուն մէջ: Միս է. Ս. Ուէպ, Մերսինի հովիւ Վեր. Հ. Կէօվզալայճեան և Տր. Ու. Ն. Չէյմպլըրս վերջերս այցելեցին Օսմանիէն: Յաւալի է ըսել թէ Օսմանիէ այս տարի քարոզիչի մը ծառայութենէն զուրկ եղաւ: Բայց նորէն ալ հոն, մեր այցելութեան առիթով, քիչ եռանդ ու փափաք չգտանք: Ժողովուրդը, իրենք, չեն մոռցած ասոն ասոն պաշտամունքի համար հաւաքուիլ ու կարծես միշտ կը սպասեն մէկուն որ գայ ու զիրենք առաջնորդէ: Անոնք մասնաւորապէս եռանդոտ ու անհամբեր են նոր եկեղեցիին շինութեան սկսելուն: Անոնք շինուելիք նոր եկեղեցիին համար իրենց խոստացած 50 Օսմ. ոսկիին 20ը արդէն պատրաստ ունին:

Օսմանիէի կառուցանելի եկեղեցիին համար կազմուած Յանձնաժողովը միսինաբական կայանին Քոնֆէրանսին հետ խորհրդակցելով որոշեց որ շինութեան գործողութիւններուն համար անմիջապէս կարգադրութիւններ ըլլան: Եկեղեցիին յատակագիծը կ'ուսումնասիրուի: Ընդհանուր գաղափարը սա է թէ շինուելիք եկեղեցին քարաշէն ըլլայ և անկիւնները, պատուհանները և դուռները կոփածոյ քարէ շինուած ըլլան. կոփուած քարէ

ըլլան նաեւ եկեղեցիին առջեւի պատը և զանգակատան աշտարակը: Եկեղեցին երկյարկանի շինել որոշուած է որ առաջին յարկը յատկացուի վարժարանի համար: Յատակագիծը այնպէս պատրաստուած է որ շինուելիք եկեղեցիին մէջ 400 հոգի կարենան հանգստորէն նստիլ: Նորէն որոշուած է որ եկեղեցիին կից շինուի երիցատուն մը: Ծախքին գալով, նախապէս 500 ոսկի հաշուուած էր, ու հիմա ալ կը կարծենք թէ այդչափ գումար մը պիտի բաւէ, և կը յուսանք թէ ծախքը ատկէ աւելի պիտի չըլլայ:

Արդէն Աւետիքեւրի անցեալ 1911 տարուան թիւ 46ին մէջ հրատարակուած նուիրատուութեանց ցուցակին գումարն էր 160.72 Օսմ. ոսկի: Մեզի կիմացուի թէ սխալ մը տեղի ունեցած է, որով ըսուած է թէ Չանճիկեան և Որդիք, Խարբերդ, նուիրած են 6.87 Օսմ. ոսկի: Այս գումարը նուիրուած է Մէզրէի եկեղեցիին կողմէ, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնները: Կը յուսանք թէ ուրիշ սխալ ըրած չենք և շատ ուրախ պիտի ըլլանք եթէ մեր ուշադրութեան յանձնուին այսօրինակ ակամայ սխալներ: Վերջերս տրուած նուէրներն հետեւեալներն են.

Մեր վերջին ցուցակով ծանուցուած 160.72 Օ. Ո.

Տիար Պ. Տալգարանեան, Պաֆրա	1.11 »
Վեր. Ս. Լ. Քարհարթ, Պէյրութ	5.50 »
Տր. Արթըր Տրէյ,	2.00 »
Տարսոնի Եկեղեցին, Տարսոն	6 00 »
Վեր. Պիւլպիւլեան, Այնթապ	0.50 »
Հաճի Լուսիա Այկիւլեան	0.04 »
Միս Սամընտի Որբանոց, Մարաշ	1.00 »
Բարեկամ մը	2.09 »
Ե. Ք. Ընկերակցութիւն, Հաճըն	0.50 »
Հաճըն Հով Սքուլ,	2.00 »
Մր. Ճ. Մ. Քէմալեան, Տրէզնօ	0.55 »
Մր. Ի. Մ. Քէմալեան »	0.55 »
Մարզուանի եկեղեցին	6.50 »
Աֆիոն Գարահիսարի եկեղեցին	0.50 »

Գումար՝

189.56 »

Կը Հաշուենք թէ առձեռն դրամը բաւական պիտի ըլլայ եկեղեցիին քարաշէն մասերը լմնցնելու: Անոր համար անմիջապէս գործի պիտի սկըսինք յուսալով թէ բարեկամներ պիտի վուրթան մեր օգնութեան, որով ոչ միայն կարեւոր ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլանք Օսմանիէի ժողովուրդին, այլ նաեւ յաջողած պիտի ըլլանք յարգել և միշտ թարմ պահել նուիրական յիշատակը այն եղբայրներուն, որոնք հոս նահատակուեցան:



Նորէն կը համարձակինք այս ձեռնարկը իբրև առարկայ ներկայացնելու բոլոր Քրիստոնէայ եղբայրներու և քոյրերու համակրութեան և ազօթքին : Այս եկեղեցին Յիշատակարան մը պիտի ըլլայ այն նահատակ եղբայրներուն որոնք հուրի և սուրբի մատուցեցան : Մեր բաղձանքը այն է թէ այս Յիշատակարանը ժողովուրդին կողմէ կանգնուի : Մանուկները անգամ կրնան մասնակցիլ այս գործին : Յիշատակարանին քար մը դնել մեծ ծախք մը չենթադրեր : Նպաստողներու թիւը որչափ մեծ ըլլայ՝ այնչափ ծաւալուն եղած կ'ըլլայ այն շահագրգռութիւնը որ պէտք է ընդհանուր ըլլայ :

Ձերդ անկեղծօրէն  
Ու. Նեպոլէ Չէյմպըր,  
Հ. Յ. Ալճեան,  
Սիմոն Վ. Քիւֆելեան

**ՆԻԿՈՄԻԴԻՈՅ ԳԱՒԱՌԻ ԺՈՂՈՎՐ**

Սոյն ժողովին 67րդ գումարումը Փետր. 16ին տեղի ունեցաւ Ատարազար, ուր այդ նպատակին համար փութացած էին գաւառիս երեք եկեղեցիներու և ճիւղ ժողովուրդներու պաշտօնեաներն ու նուիրակներ, Վեր. Տր. Չէյմպըրս ու գաւառիս նորընտիր աւետարանիչ Վեր. Յ. Կարապետեան :

Ժողովը բացուեցաւ պաշտամունքով մը զոր վարեց Վեր. Տր. Չէյմպըրս, որմէ յետոյ զիւանի կազմութեան ձեռնարկուելով՝ ներկայ տարւոյ համար նախագահ ընտրուեցաւ Վեր. Կ. Ատանալեան : Մասնաւոր պաշտօններու համար երեք մասնախումբեր ընտրուեցան : Տեղեկագրութեանց նիստին մէջ լսուեցան նախ, Վեր. Աւետարանիչին հաղորդումները, որոնցմէ յայտնի կ'ըլլար թէ մեր համայնքներուն մէջ հոգեւորին հետ կրթական պէտքին զիտակցութիւնն ալ արթնցած է : Յովհ. էֆ. Ալիքսանեան ուրախաօրթ տեղեկութիւններ տուաւ հոգեւոր և կրթական գործին, ինչպէս նաեւ Կիրակնօրեայ Դպրոցներու և զանազան օգտամատոյց ընկերակցութիւններու մասին : Յիշեց նաեւ եռանդուն և օգտակար գործունէութիւնը Վեր. Կ. Ատանալեանի, ի բացակայութեան իրենց հովուին, Վեր. Յ. Ճէճիզեանի :

Ազար էֆ. Ազարեան իր տեղեկատուութեանց մէջ ի մասնաւորի ծանրացաւ կառուցանելի եկեղեցւոյն շինութեան գործին նկատմամբ : Երախտագիտութեամբ յիշատակեց քոյր եկեղեցեաց դրամական նպաստները, ի դիմաց իր եկեղեցւոյն մասնաւոր շնորհապարտութեան արժանի հոշակուեցան Վեր. Տր. Չէյմպըրս, Նիկոմիդիոյ Սրբազան Առաջնորդը, նաեւ Գերման դեսպանատան Փասթէօն Կոմս Լիւթթի Սաւու :

Ոչ նուազ քաջակերական էին Պարտիզակի և Օվաճըզի նուիրակներու կողմէն արուած տեղեկութիւնները : Վերջնոյն նուիրակը շեշտեց կրթա-

կան գործին գոհացուցիչ հանգամանքը, և դպրոցի նոր շէնքի մը անհրաժեշտութիւնը զգացուց, Վեր. Տր. Չէյմպըրս Բարձր. Վարժարանի կրթականին ելեմուտքին և այլ պարագաներուն մասին խօսելով դրուատեց ուսուցիչներու եռանդուն գործունէութիւնը, արդիւնաւոր տարի մը բոլորելու եռանդը ներշնչելով ներկաներուն :

Սոյն տեղեկութիւններէն ետքը ծանուցուեցաւ որ յաջորդ գումարումը տեղի ունենայ Նիկոմիդիա փոխան ուրբաթի, հինգշաբթի օրը, Մայիս 23ին, որպէս զի աւելի ժամանակ տրուի Աւետարանչական ժողովներ ունենալու և նպաստելու ժողովուրդին հոգեւոր զգացումներուն արթնութեան :

Նախորդ որոշման մը համեմատ տարեկան քարոզը խօսեցաւ ստորագրեալս : Նոյն կիրակի Վեր. Տր. Չէյմպըրսի նախագահութեան տակ երկու ընդհանուր պաշտամունքներ եւս տեղի ունեցան մասնակցութեամբ բոլոր հիւր պաշտօնեաներու և նուիրակաց : Քարոզարար  
Մ. Հովհաննէս

**Պարտիզակ**

**ՀԱՅ ԿԵԱՆՔԸ**

Ընտրութիւնները ամենամեծ եռանդով յառաջ կը տարուին թէ՛ նահանգներու և թէ՛ մայրաքաղաքիս մէջ : Այլեւս որեւէ կասկած մը չի կրնար ըլլալ թէ Իրիւնկաբանները յաղթող պիտի հանդիսանան և հաւանականաբար 3/4 մեծամասնութեամբ պիտի վերադառնան Երեսփ. Ժողով և պիտի ընդունին Յիքոյ յօդուածը, որ պիտի զօրացնէ զգալապէս Իրիւնկաբաններու արդէն իսկ զօրեղ դիրքը : Բայց Երեսփ. Ժողովին մէջ անհրաժեշտ է ունենալ ընդդիմադիր տարր մը : Եթէ Իրիւնկաբանք հեռատես ըլլան, պէտք չեն ունենար ճշմոյշ և չափազանց ճնշելու Իրիւնկաբաններու հարցադոյն և միաձոյլ Իրիւնկաբան Մեղոսաւի մը կազմութեանը պիտի յաջորդեն կրկին նոր բաժանումներ, Հիլլը շեֆերներ, և դարձեալ պայքարը պիտի շարունակուի նոր ու հինցած ըմբռնումներու միջեւ : Կեանքի այս վարդապետը ո՛չ մէկ իշխանութիւն, ո՛չ մէկ կուսակցութիւն, ո՛չ մէկ ոյժ չկրնար կասեցնել : Քանի մարդիկ կան՝ այս ընկան պայքարը պէտք է տեղի ունենայ : Եթէ կարելի ըլլար բոլոր մտածող և զգացող մարդիկը մեքենայ դարձնել, կարելի պիտի ըլլար գուցէ ընդհանուր միանամանութիւն պահպանել : Իրիւնկաբան համար անշուշտ աւելի շահաբեր է զանազան տարբեր կազմուած, տարբեր ըմբռնումներու և աշխարհահայեցողութեան տէր ընդդիմադիր կուսակցութիւն մը ունենալ իր դէմը քան միաձոյլ քաղաքական ու տնտեսական համոզումներու տէր կազմակերպուած կուսակցութիւն մը, որուն հետ պայքարելը շատ աւելի դժուարին պիտի ըլլար հետ-



գնեալ, եթէ այսպիսի կուսակցութիւն մը պետական կեանքի իրական և հրամայողական պահանջներուն վրայ հիմնուած ըլլար: Իբր օրինակ կրնանք յիշել ընկերավարականներու գարգացումը Եւրոպական բոլոր երկիրներու մէջ: Երբ մտածենք թէ Գերման-Պրանսական պատերազմէն ետքը 1871ին ընկերավարականները միմիայն մէկ ներկայացուցիչ ունէին Գերման Ռայխտագին մէջ, ուր այժմ անոնք 110 երեսփոխաններէ կազմուած ամէնէն գորեզ կուսակցութիւնը կը ներկայացնեն, կըրնանք հասկնալ թէ քաղաքական որոշ աշխարհահայեցողութեան տէր և իրական կեանքի հրամայողական պահանջներուն վրայ հիմնուած կուսակցութեան մը դէմ պայքարելը որքան դժուարին է նոյն իսկ ամենակարող պետութեան մը համար: Երեսփոխաններու թիւը չէ որ նշանակութիւն ունի այսպիսի պարագաներու մէջ, այլ որեւէ կուսակցութեան համագումար հետեւողներու թիւին յաւելումը: Այս ընտրութիւններուն վերջնական արդիւնքը գեռ չենք գիտեր, բայց այժմէն կարելի է ըսել թէ ընդդիմադիրներու կամ Ինթելիգենտներու կողմէն արեւելի Արաբներէն, Ալպանացիներէն և Յոյներէն պիտի կազմուին: Շատ ուրախ պիտի ըլլայինք, եթէ ի վերջոյ այդ դժգոհ կուսակցութեան ընդդիմադիր ներկայացուցիչները ազգային հանգամանք չտային իրենց պայքարին: Հարկաւ պետութիւնն ալ պէտք չէ առիթ և նիւթ ապ ընդդիմադիրներուն որեւէ կերպով պայքարը ազգայնական հողին վրայ փոխադրելու, քանի որ պետութեան պարտականութիւնն է ամէն ազգային արդար պահանջ լսել և դոճացնել:

Հայերուս բռնելիք ընթացքն ալ բաւականաչափ որոշ է ալ ընտրական պայքարին մէջ: Մեր երկու կարեւորագոյն յեղափոխական կուսակցութիւնները որոշ դիրքեր գրաւեցին առանց «Համազգային Համերաշխական Ժողովին» կրիսայի քայլերուն հետեւելու, որ դեռ վերջնական որոշումը տուած չէ, թէեւ արդէն ամէն տեղ երկրորդ կարգի ընտրողներու ընտրութիւնը գրեթէ լիննալու վրայ է գաւառներու մէջ և կարգ մը ուրիշ նահանգներ ալ երեսփոխաններ անգամ ընտրած են: Ինչպէս ըստ իրենց կողմէն և Հնչակեանները Ինթելիգենտ հետ միացած են. մինչեւ յօգուածիս տրպուհը կը յուսամ թէ Կեդրոն-Ռամկավար-Անկախներն ալ Ինթելիգենտ հետ գործակցութեան որոշում կու տան: Այս ընթացքէն պարզապէս կը հասկցուի սա պարագան թէ մեր ազգին մեծամասնութիւնը իր յեղափոխական կազմակերպութիւններով որոշած է օրուան տիրող կուսակցութեան գործակցելու որովհետեւ ազգային շահերու ապահովումը անոր մէջ կը գտնէ: Թէեւ մեր կենսական խնդիր-

ները լուծելու համար մինչեւ այժմ եղած խոստումները չիրականացան, բայց այնու ամենայնիւ զանոնք իրագործելու կարող և բարեացակամ կը համարուի դարձեալ Ինթելիգենտական կառավարութիւնը: Ինթելիգենտներու վերջերս ըրած կազմերը այս համոզումը աւելի զօրացուցին: Հողային հարցին մէջ իրենց բունած տարտամ ընթացքը, վերջերս ալ անհեթեթաբար Ռուսիոյ մեղի դէմ մղելիք պատերազմին բուն պատճառը Դաշնակցականները սեպեմբեր և անկից ետքը այս կուսակցութիւնը կասկածելի դարձնելու համար ըրած ջանքերին լաւ տպաւորութիւն չէին ըներ բնականաբար: Մենք ուրախ կ'ըլլայինք, եթէ Ինթելիգենտ Դաշնակցութեան ծրագիրը և գործելակերպը քննադատէին, երկուքին մէջ եղած հակասութիւնները ցուցադրէին: օրինակի համար, ըսէին թէ ի՞նչպէս ընկերավարական կուսակցութիւն մը կրնայ գործակցիլ կուսակցութեան մը հետ, որուն նպատակը, հակառակ իշխանութեան սկզբունքին, միապետին իրաւունքը զօրացնելն է եւայլն. բայց պէտք չէ որ զրպարտութիւններով և գրգռիչ ստաբանութիւններով կասկածելի ընէին զայն ու անոր հետեւողները իրենց հետեւողներուն աչքին առջեւ:

Ինչպէս արդէն գրեցինք, Ինթելիգենտ բանակցութեանց մէջ ամէնէն կարեւոր դերը խաղացած է Դաշնակցութիւնը, որ Ինթելիգենտ իր Բնիչբէին որոշումները ընդունիլ տալէ զատ առաջարկած է նաեւ 27 Հայ երեսփոխան ընտրել: Երկար բանակցութիւններէ ետքը 18-20 Հայ երեսփոխան ընտրելու որոշում արուելու վրայ է: Ոստքէն դործ բաւական հեռաւորութիւն կայ, բայց բանակցողներու անկեղծութեան կասկածելու պէտք չունինք առ այժմ: Վստահ ենք թէ Ինթելիգենտ ալ վերջնականապէս հասկցած է թէ խոստումները չիրագործելու քաղաքականութիւնը չափազանց վտանգաւոր է թէ՛ իրեն և թէ՛ երկրին համար: Իրականութիւնը լաւագոյն պատասխանը պիտի ըլլայ այս բոլոր տեսութեանց: Այս անգամ ալ յուսանք և սպասենք:

Հ. ՄԱՄՅԱՆ

ՄԵՐ ՊԱՏԿԵՐԸ

Այս անգամ մեր թերթին ճակատը դրած ենք Մարզուանի Անաթոլիա Գոլէճին նոր շէնքին պատկերը: Այս քարէ և երկաթէ շինուած առաջին շէնքն է հոն: Անունն է Նորթ Գոլէճ, և Գոլէճի ճիւղին ուսանողներուն իբրեւ ննջարան յատկացուած է: Նախապատրաստականի ուսանողներուն սենեակները ուրիշ շէնքի մը մէջ են:



# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

## ԱՐՏԱՔԻՆ

Անգլիա . Անցեալ երեքշաբթի Վարչապետը իր խոստման համեմատ Երեսփ. Ժողովին ներկայացուց հանքագործներու նուազագոյն օրավարձի օրինագիծը, որ առաջին ընթերցումով ընդունուեցաւ : Միեւնոյն ժամանակ հանքագործներու ընկերակցութիւնը որոշեց մերժել ամէն տնօրինութիւն որ չափահաս գործաւորներու համար օրական 5 չիլին և փոքրերու համար օրական 2 չիլին չսահմաներ : Հինգշաբթի Վարչապետը ապահովցուց Երեսփ. Ժողովը թէ կառավարութիւնը բացարձակապէս անկողմնակալ դիրք բռնած է և միակ նպատակ ունի ամուխի չգոյութեան պատճառով անձկութեան մատնուած ճարտարագործ ժողովուրդը ազատել իր անօրինակ տագնապէն և խնդրեց առջարկուած օրինագիծը իբրեւ առժամեայ դարման ընդունելով յուսահատական կացութենէ մը ազատել երկիրը : Վերջապէս երկրորդ ընթերցումով քուէարկուեցաւ օրինագիծը 225ի դէմ 348 քուէով : Հանքատէրեր կը գանգատին թէ նուազագոյն օրավարձի դրութիւնը ծանր բեռ պիտի ըլլայ իրենց : Հանքագործներու միութիւնը երկուշաբթի խորհրդակցեցաւ կառավարութեան և հանքատէրերու հետ : Միեւնոյն ժամանակ Խորհրդարանը յառաջ տարաւ օրինագիծին քննութիւնը և նուազագոյն օրավարձը որոշելու բարեփոխում մը մերժեց ու երրորդ ընթերցումէ ետեւ ընդունեցաւ օրինագիծը 48ի դէմ 213 քուէով : Անցեալ շաբթու Արտաքին գործերու նախարարի խորհրդականը Երեսփ. Ժողովին յայտարարեց թէ նախարարը ունէ զեկոյց ստացած չէ թէ Իտալիա և Ռուսիա համաձայնութիւն մը կնքած են և թէ Իտալիա պիտի ընդարձակէ իր գործողութիւններուն թատրը : Ըսաւ թէ պատերազմիկ ազգ մը իր գործողութիւններուն տէրն է և պատասխանատուն միանգամայն : Չէզոքներն ալ իրենց գործողութեան ազատութիւնն ունին, երբ իրենց չահերը վտանգի մէջ ըլլան : Օսմ. դեսպան Թէվֆիզ փաշա անցեալ հինգշաբթի Ճորձ թագաւորին մատոյց Խանէտան ը Ալ ը Օսմանի և Իմթիյաղի ակաւնակուռ պատուանշանները և շատ սիրալիր ընդունելութիւն մը գտաւ ու Վիքթորիա պատուանշանին մեծ խաչով մեծարուեցաւ : Անցեալ շաբթու ծով իջուցուեցաւ աշխարհի ամէնէն մեծ ու հզօր զրահաւորը, Քոնի Մէյրէ, որու շինութիւնը անցեալ Մարտին սկսաւ : Տարողութիւնն է 27,000

տկուչի, երկայնութիւնը 198 մետր և կեդրոնի լայնքը 26, արագութիւնը 28 հանգոյց : Փետր. 10ին մեռած Լորտ Ուէնտսուըրթի մեծ գումար մը կտակեց իր անուամբ հաստատելի որբանոցի մը համար, ուր պիտի ընդունուին զլիսաւորապէս աղքատիկ բայց պարկեշտ հանքագործներու 5-12 տարեկան որբեր : Կառավարութիւնը այդ գումարին վրայ 165,000 ոսկի տուրք առաւ :

Գերմանիա . Կայսրը անցեալ հինգշաբթի ընդունեցաւ Բայխսթակին դիւանը : Ուրբաթ սկսաւ երկու շաբաթ առաջ ծանուցուած իր ուղեւորութիւնը : Առաւօտուն Պերլինի Իտալական դեսպանին հետ երկար տեսակցութիւն մը ունեցաւ դեսպանատան մէջ : Երեկոյին Աւկուսթ Վիլհելմ իշխանին, իշխանուհիին, Վիքթորիա Լուիզ իշխանուհիին և հետեւորդներու հետ մեկնեցաւ դէպի Վիէննա, ուր ժամանեց շաբաթ կէսօրէ մէկ ժամ առաջ և կայարանին մէջ մեծ պատիւներով ողջունուելէ ետեւ զնաց Շէճուպրունի պալատը, ուր սիրալիր տեսակցութիւններ ունեցաւ Յրանց Եոզէֆ կայսեր և Արտաքին գործերու նախարար կոմս Պէրլսթուտի հետ : Երեկոյեան հացկերոյթէն ետեւ մեկնեցաւ դէպի Վիեննայի, ուր ժամանեց երկուշաբթի օր : Նոյն օր ժամանեց նաեւ Իտալիոյ Թագաւորը, որ կիրակի իրիկուն մեկնած էր Հոռմէ : Գիշերը հացկերոյթէ մը ետեւ Թագաւորը հրաժեշտ առաւ իր հիւրերէն և մեկնեցաւ դէպի Հոռմ : Առաւօտուն ալ Կայսրը մեկնեցաւ դէպի Պրիօն, ուր ժամանեց հետեւեալ օր և Աւստրիոյ գահաժառանգ իշխանին հետ տեսակցելէ ետեւ երեկոյին մեկնեցաւ դէպի Քորֆու : Վարչապետի և Արտաքին գործերու նախարարի փոփոխումը յետաձգուած կը թուի մինչեւ Կայսեր Քորֆուէ վերադարձը, այսինքն երեք չորս շաբաթ : Բանակը խաղաղութեան ժամանակ 29,000 զինուոր աւելի պիտի ունենայ և զինուորներու և սպաներու օրավարձը պիտի բարձրանայ, Նաւային ծրագիրն ալ կը տրամադրէ գործօն երրորդ նաւարածին մը աւելցնել, նաեւ 16,000 նաւազ և 75 սպայ : Վերջապէս բանակին ծախքը պիտի ըլլայ 1912ին 97 միլիոն մարք. 1913ին 127 միլիոն, 1914ին 114 միլիոն, իսկ նաւատորմինը յաջորդաբար 15 միլիոն, 28 միլիոն, 38 միլիոն և 43 միլիոն :

Յոաննապոս . Թագաւորը, Թագուհին և արքայական ընտանիքին անդամներէն շատեր անցեալ շաբթու կզգի մը դացին՝ մինչեւ երեսփոխանական ընտրութիւններուն վերջը հոն մնալու նպատակով : Ընտրութիւնները կիրակի սկսան և Մ. Վէնի զէլտսի կուսակցութիւնը, որու յաջողութենէն կա-



խում պիտի ունենայ երկրին խաղաղ զարգացումը և առաջադրուած բարենորոգումներուն գործադրութիւնը, ջախջախիչ յաղթանակ մը տարաւ: Նորընտիր Երեսփ. Ժողովին 181 անդամներուն 147ը Վէնիգէլոսեան են, 8ը Թէոթոքիսեան, 3ը Զայիմիսեան, 7ը Մավրոմիխալեան, 8ը Բալլիեան և 8ը անկախ: Կրետացիները եւս ամէն կուսակցութենէ 69 կրետփոխան ընտրած են (23ը Վէնիգէլոսեան), ինչ որ կը կնճռտէ խնդիրը, վասն զի տէրութիւնները խստիւ կը հակառակին անոնց Աթէնք երթալուն:

**Պարեւորէջ.** Ռազմադաշտէն ոնէէ նոր լուր չկայ: Սթէֆանի գործակալութիւնը Տրիպոլիէ կ'իմանայ թէ ամսոյս 19էն ի վեր մեծ գործունէութիւն ցոյց կուտայ Տրիպոլիէ և Սանթա Պարպարայէ Այն Զարա գացող կառախումբը: Պաշարն հիմա կառախմբով կը տարուի հոն և երկուշաբթի Թաճուրայի երկաթուղիին շինութեան ձեռնարկուեցաւ: Նոր զօրք կը զրկուի Պէնդազի, Հաչատրեան համար ոնէէ ձեռնարկ չեղաւ Բ. Դրան մօտ, բայց Իտալիոյ հետ բանակցութիւնները դեռ կը շարունակուին: Նաւատորմը սկսաւ վերերեւել Օսմ. Ղուրբու մէջ: Զրոյց կը չըջի թէ Իտալիա նախ պիտի գրաւէ Տարտանէլի մօտ կղզի մը, Լեմնոս կամ Թենետոս, իրրեւ ամուսի կայան և նաւաշին գործողութիւններու խարխիս, և ապա պիտի սկսի գործել Տարտանէլի դէմ և ուրիշ տեղեր: Ռոչուած է նաեւ ղեկաւոր օգանաւ մը զրկել իրրեւ օժանդակ նաւատորմին:

**Հեռուէրաւորք.** Վերջին օրերս քանի մը մարտանաւեր ծով իջուցուեցան այլեւայլ տեղեր. գերագոյն տրէտնոթ մը ի Կրինոք (Սկովտիա), Աւստրիան երկրորդ տրէտնոթ մը ի Թրիէսթէ և Իտալական լրատար-յաժանաւ մը ի Քասթալլամարէ տի Սթապիա: Բոլորովին նորոգուեցաւ անցեալ Օգոսին Նափոլիի Ծոցին մէջ խրած Սան Զորճի: մարտանաւը և ի մօտոյ պիտի ելլէ աւազանէն: Ֆրանսական Կլաւա յաժանաւը փոթորկի մը պահուն չըզթային խզուելէն ինկաւ Քոնֆէ յաժանաւուն վրայ և վնասեց զայն: Ամերիկեան Մէյն զրահաւորը, որու Հափանայի առջեւ պայթումով ընկղձումը Սպանիւնամերիկեան պատերազմին պատճառ եղաւ և որ յետոյ մեծ ջանքերով Ղուրին երեսն հանուեցաւ և հաստատուեցաւ թէ ոնէէ թշնամութեան զո՛ չէր գացած, անցեալները վերջնապէս ընկղձուեցաւ Ամերիկեան զրահաւորներու և բերդի մը թնդանթներէն ողջունուելով: Իսկ անոր մէջ գտնուած մարդկային մարմինները հանդիսաւոր թափօրով զրահաւոր մը տարուեցան Նորֆոք փո-

խաղրուելու և աղգ. դերեղմանատան մէջ թաղուելու համար: — Պարսիկ կառավարութիւնը անցեալ շաբթու գոհացուցիչ պատասխան տուաւ Փետր. 18ի Անկլեւուս ծանուցագրին բոլոր կէտերուն: Սալար էտ Տէօվլէ կը մերժէ ոռճիկի մը փոխարէն Պարսկաստանէ հեռանալու առաջարկը և կ'աշխատի իշխանապետութիւն մը հաստատել Քիրմանշահի մօտ: — Սուլճայի մէջ ծագած ըմբոստութեան պատճառով Չինացիները անկախ հանրապետութիւն մը հաստատած են Իլիի երկրին մէջ: Թաթար Զօր. Բուանկ Սու բոնի նախագահ ընտրուած է այդ հանրապետութեան: Չինու Վարչապետը կը պնդէ Անկլեւպլճիական խմբակէ մը փոխառութիւն կնքելու պայմանագրին վրայ, ըսելով թէ ինք վաւերացուց զայն, վասն զի Անգղիական, Ֆրանսական, Ռուսական և Գերման դրամատուններ կը վարանէին փոխատուութիւն ընել: — Թունուզի բժիշկ մը, Տր. Նամէ, հետախտի դէմ չիճաղեղ մը գտած է, որ թեւ յոգերուն մէջ ներարկուելով լաւ արդիւնք տուած է քսան հիւանդի համար: Թունուզի Փասթէօրեան հաստատութեան սնորէնը նպաստաւոր վկայութիւն կուտայ և կը յանձնարարէ աւելի ընդարձակ փորձարկութիւն կատարել: — Անգլ. թերթ մը կ'իմանայ թէ Մոլլա Հաֆիտ Ղլային հիւանդութենէ կը տառապի և կը մերժէ ստորագրել Մարոքի Ֆրանքեզերման դաշնագիրը: — Երկուշաբթի վեց շարագործներ ինքնաշարժով Շանթիյեի (Ֆրանսա) գացին և Սոսիէթէ Ժէնէրայի դրասենեակը մտնելով երկու պաշտօնեայ սպաննեցին և 40,000 ֆրանք գողցան ու դէպի Փարիզ հեռացան: — Սեւասթոփոլի մէջ սաւառնորդ մը վերելքի փորձի մը պահուն ուրիշի մը հետ մեռաւ անկուծի հետեւանքով: — Թոքեօի մէջ անցեալները 12,000 տուն այրեցան:

**Ն Ե Ր Ք Ի Ն**

**Մարտապատ.** Զորեքշաբթի Փանկալթիի զինուորական վարժարանին մրցանակարաշխութեան հանդէսը տեղի ունեցաւ Կայսեր, գահաժառանգին, իշխաններու, նախարարներու և բազմաթիւ հրաւիրեալներու ներկայութեամբ: Հետեւակազօրաց 355 և հեծելազօրաց 39 սպայ շրջանաւարտի վկայական ստացան բուն իսկ Կայսեր ձեռքէն և անոնցմէ 18ը ոսկի ժամացոյց: Շրջանաւարտներուն մէջ կար 4 Հայ, 3 Յոյն և 1 Հրեայ: Համագումարն եղած է այժմ 12,981, որու 1,404ը արդի Սուլթանին օրով: Յունիսին շրջանաւարտ պիտի ըլլան 425 և 30 սպայ, որոնց մէջ պիտի գտնուին



Յ Հայ և 1 Յոյն : Իսկ դալ տարի նոյն ամսուն յրջանաւարտ պիտի ըլլան 323 և 31 սոլայ , 42 Հայ , 2ը Յոյն և 2ը Հրեայ : — Լահէի Ռուս դեսպան Մ. Սվէչին մայրաքաղաքս եկաւ դեսպանատան դործերը վարել ժինչեւ նոր դեսպանն Մ. տը Կիրոսի ժամանումը : Եւստորդ դեսպան Մ. Չարիքով հրաժեշտի այցելութիւն տուաւ զահաժառանգ իշխան Եւստուֆ Իզզէտտին էֆ.ի և Հայ ու Յոյն Պատրիարքներուն : Թուրքեոսու յարաբերութիւնները որ ձգտեալ էին Պարսկաստանի և սահմանագլխի խնդիրներու պատճառով սկսան բարւոքիլ : — Անկլեւթուրք բանակցութիւնները լաւ ընթացքի մէջ կը ներկայացուին , և Ի մօտոյ Գերմանիոյ տեղեկութիւն պիտի հաղորդուի Պազտատ-Քոլէյթի երկաթուղիին նկատմամբ : Պազտատ-Էլ Հայիֆի զծին (648 հզմթ.) յատակածեւերը ձեռնհաս իշխանութեան յանձնուած են և , երբ որոշում տրուի , շինութեան պիտի ձեռնարկուի երկու կողմէն միանգամայն : — Ընտրողական գրեթէ բոլոր ցուցակները պատրաստուեցան և ի ցոյց դրուեցան : Ի մօտոյ կը ձեռնարկուի բուն ընտրութեան : — Կայսրը 2,000 ոսկի նուիրեց Շքոտրայի մէտրէսէին և ազքանեբու հիւանդանոցին : — Պետական Սորհուրդը անկարելի դատեց պահեստի վաշտերու պատկանողներէն մէկ քանին բացառաբար զէնքի տակ առնել և Վճռեց թէ այդպիսիներէ առնուած դրամական փոխարինութիւնները ետ տրուելու են : — Ձեռնհաս իշխանութիւնը , հետախտի վերերեւոմբ հասանական նկատելով , հրամայեց այժմէն զինուոր անոր զէմ գործիք , ղեկ և հիւանդարան , ևն պատրաստելով : — Շէյխ իւլ Իսլամը յայտարարութեամբ մը Իսլամ կիւրերը հրաւիրեց քօլարկուիլ և չբանել աւանդական բարքերը : — Ճրանսական դեսպանատան Ս. Թարգամը Ալժէրիոյ Իսլամներուն կողմէ Բ. Դուռ յանձնեց 100,000 Փրանքի չէք մը Կարմիր Մահիկի ի նպատակ : — Թուրքեպարսիկ սահմանագլխի ճշտման խառն յանձնաժողովը իր նիստերն սկսաւ :

Նահանգներ . Սամոսի իշխան Քուփասի պէյ անցեալ ուրբաթ գիշեր եկեղեցիէն իր պաշտօնատունը երթալու պահուն անձանթէ մը վիրաւորուեցաւ ամորձանակի երեք զնդակով և հետեւեալ օր մեռաւ : Սճրագործը , Սթէնքի կամ Սամոսցի Սթավրօ վարիտոս , ձերբակալուեցաւ և ամէն ինչ խոտովանեցաւ : Եւստարաններու խորհրդին որոշման համաձայն յուղարկու որութիւնը պետական ծախքով կատարուեցաւ Կիրակի Կայսրը ցաւակցական հետագիր զրկեց հանդուցեալին ընտանիքին ի վաթի : Մէրթիներ երթնել կտուավարիչ վէլերի պէյ յաջորդ անուանուեցաւ : Հանդուցեալը 7 տարիէ Ի վեր կը վարէր իր պաշտօնը : Լեզուագէտ ու հնդկանկ Էր ու Օսմ. և օտար բազմաթիւ պատուանշաններով պատուուած : — Ընտրուե

կան պայքարը աւելի սաստկացաւ : Տր. Րիզա Թէլֆիդ պէյ , որ բանտէն արձակուելէ ետեւ Կիւմիւլճիէն դացած էր , հակակիրներու կողմէ յարձակում կրելով չարաչար դանակոծուեցաւ և 8-10 օրուան կը կարօտի իր վերքերէն բուժուելու համար : Լուծֆի Ֆիքրի պէյ Տէրօմի մէջ պարտութիւն կրեց և Մալաթիա փոխադրուեցաւ : Էսկի շէհրի մէջ ընդդիմադիրները տղէտ մարդիկ խոտվութեան զրդեցին , նմանապէս Լանդազայի (Աէլանիկ) գաւառակին մէջ և 10 գիւղացի ու ոստիկան զինուոր մը սպաննուեցան , և զիւղայի ու զինուոր 25 հոգի վիրաւորուեցան : Ուրիշ կողմերէ ալ զեղծումներ և բողբոներ կը հայտնուին : — Թարքի կը հեռագրուի թէ Մակեդոնիոյ Ներքին Կազմակերպութեան հետ բանակցելու համար զրկուած պատուիրակները մերժուեցան բոլորովին : — Լաթաքիոյ մէջ 41 լեռնական , և Արճէշի մէջ աւաղակապետ Սայիտի կղբօրորդի Հրապէթ իր 6 ընկերներով ձերբակալուած են , Հալէպի մէջ ալ Բէօր Անճէտ սպաննուած է ոստիկաններէն : — Տրապիզոնի Սիւրսէնէ գաւառակին մէջ 30 վաճառատուն և 3 մթերանոց այրած են : Վնասը կը հաշուուի 10,000 ոսկի : — Տրամայի գաւառը պաւարնակի համար 1,000 ոսկի նուիրեց : — Շարաթ պաւառ Սէլանիկ-Մանասթըրի երկաթուղիին 174 հզմթ.ին վրայ ուժանակի երկու ուղի գտնուեցաւ , և բարեբախտաբար անանց պայթեցի վերցուեցաւ : — Ասթամեայ օրէնքի մը համաձայն 1,200,000 դահի վարկ մը յատկացուեցաւ Մալիարներուն : — Քոլէյթի Շէյխը թնդանթի 21 հարուածով ընդունեցաւ պատուանշան մը պատող Օսմ. պատուիրակութիւնը :

Աւելի . Ժող. Այնալը Չէշմէի (հերա) Ար. Երրորդութիւն եկեղեցւոյ կրօնա-բարոյական երկշաքաթեայ ատկանախօսութիւններուն չորրորդը , որ կերակր տեղի պիտի ունենար , վերջին պահուն յետաձգուեցաւ բանաւոր պատճառով : Փրոֆ. Արթ. Տ. Յակոբեան ծանուցուած այդ բանախօսութիւնը այս կիրակի պիտի ընէ ժամը 2.30ին (Ը. Ե.) Նիւթին է «Կրօնքը ջնջուլու ջանքը» կը յուսանք որ շատեր պիտի փութան ունկնդրել այս շահեկան բանախօսութեան , Աւագ Հինգշաբթի , ըստ սովորութեան , հոգեւոր պաշտօն պիտի կատարուի նոյն եկեղեցիին մէջ ժամը 10ին (Ը. Ե.) և Տէրուական Ընթրիք տեղի պիտի ունենայ : — Տ. Գրիգորիա Ծ. Վրդ. Պալապեան , որ կիրակի Գերմանական մատարան մէջ խօսեցաւ Անիի աւերակներուն վրայ , հրաւիրուեցաւ նոյն նիւթին վրայ խօսիլ հինգշաբթի երեկոյ ժամը 8½ին Այնալը Չէշմէի Ար. Երրորդութիւն եկեղեցւոյ դպրոցայտակին մէջ ի նպատակ Ե. Ք. ընկերակցութեան : — Ատանայի Մէրթէպի Սուլթանի Անդղիբէնի նորընտիր ուսուցիչ Վեր. Փանթակ



Իսթէնաէրեան երեքշաբթի ուղեւորեցաւ իր նոր պաշտօնատեղին: — Շարաթ Բուլբրթ Գուլէի հիմնադրին ծննդեան տարեկարծին առիթով մասնաւոր պաշտօն մը կատարուեցաւ նոյն հաստատութեան մէջ Ի յիշատակ Տր. Ալպրթ Լոնկի: որ 29 տարի պաշտօնավարած է հոն: Օրուան առեւտարութիւնը, Փրոֆ. Փանարէթով, դժբախտաբար կը բացակայէր հիւանդութեան պատճառով և հաստատութեան նախագահը կարգաց անոր գրութիւնը: — Մարտէ հետեւեալը կը գրուի մեզի. Մր. Լէսլի, որ հանգուցեալ Միս Շաթրգի Ուրֆայի մէջ թողած գործը պիտի ստանձնէ, առայժմ հոս կը զբտնուի և Տաճկերէն կ'ուսանի: Բայց արդէն իսկ սկսած է շատ օգտակար գործունէութիւն ցոյց տայ: Աստ. ճեմարանի ուսանողաց մարմնամարզի կանոնաւոր կրթութիւն կու տայ: Երկիցս քարոզած է եկեղեցիներուն մէջ: Փետրուար 28/ին ալ Ազգէրէ եկեղեցին մէջ Ի գիմնայ Ե. Ք. Ընկերակցութեան բանախօսեց ՁՈ՞վ է կարող մարդը նիւթին վրայ: Իր յորդը խօսածները խորունկ հոգեւ որ կեանքի հետ վարդաղեալ մտքի և գործնական փորձառութեան զբոշմը կը կրեն: Վերաստուր Եղոյեան հոս է երկու շաբաթէ ի վեր: Անցեալ շաբթու ամէն առաւօտ շատ ուղղուապէս խօսեցաւ Աստ. ճեմարանի ուսանողաց: Այս շաբթու ալ ամէն կէսօր տիկնանց և ամէն երեկոյ յորդ ժողովուրդին քարոզեց եկեղեցիներուն մէջ: Իր բացարձակապէս հոգեւոր քարոզութիւնը շատ կը դնահատուի, և կը յուսանք թէ տեւական արդիւնքներ ալ պիտի տեսնուայ: — Տաճարի մէջ երեւցած կոչէ մը ազգուելով Աւերիկանայերը ձեռնարկած են 7-8 հարիւր տուար հաւաքել ի նպաստ կի իկիոյ եկեղեցիներուն: Առ այժմ հանգանակուած է 220 տուար:

Հայ Ժող. Ազգ. Ժողովը անցեալ ուրբաթ նստի հրահրուած էր: Բայց օրինական սեմամասնութիւն չունենալով չկրցաւ օրակարգի խնդրով զբաղիլ: Իմանալով թէ համազգային յանձնաժողովը իր բանակցութիւններուն մէջ ոեւէ եզրակացութեան չանդամ չէ, Վարչութեան յանձնարարեց կարելին ընել որպէս զի ընտրական յառաջիկայ պայքարին մէջ ազգին իրական շահերը պաշտպանուին: Հայ երեսփոխաններու թիւին օրինականութեան համեմատութեամբ և թեկնածուներու անուանումին տեսակէտով Յանձնաժողովը քանի մը նիստեր եւս ունեցաւ, բայց նախորդներուն նման ապարդիւն: — Կիրակի Փանկաթիի գերեզմանատան պեղեալ մասէն հանուած ոսկրները, որ մասնաւոր գերեզմանի մը մէջ զտեղուած էին, կ'ըջուեցան մեծ հանդէսով: Ահագին բազմութիւն մը ներկայ էր:

Թրամուէյի բնկերութիւնը, որ արդէն սկսած էր զծին շինութիւնը գերեզմանատան պեղեալ մասին մէջ, յառաջ կը տանի իր գործը: Իսկ պատին քանդուած այս շաբթու սկսաւ: — Հայաբնակ նաճանգներու բարեկարգութեան յանձնաժողովին նախագահ Էվզաֆի-Նախարարը կիրակի իր պաշտօնակիցներուն ներկայացուց իր խորհրդակցութիւններուն արդիւնքը, բայց տեղեկութիւն մը չհաղորդուեցաւ թերթերուն և ղեւ յանձնաժողովին բոլոր անդամները չեն ընտրուած: Վարչութիւնը սակայն չըջարեական մը զրկեց գաւառները, որով մանրամասնօրէն կը պարզէ թէ ինչպէս ներկայացնելու են իրենց տեղային պահանջները: Դրկեց նաեւ պատճէներ հարստանարութիւններու վերաբերեալ պատճախան թագրիթներ որ ժամանակաւ մատուցուած է կառավարութեան: — Զարբանձագի, խնդրին համար նոր թագրիթ մը եւս տրուեցաւ Բ. Դրան: — Կաթորիկ ազգայիններու Կ. Պատրիարքին պաշտօնակցութեան հրամանագիրը կիրակի չկարդացուեցաւ եկեղեցիներու մէջ: Պապական իշխանութիւնը չվիտայնելու և այլեւայլ խնդրներու նկատմամբ համաձայնութիւն գոյացնելու նպատակով Երկուշաբթի Բ. Դանէն Եպարքոսական հրամանագիր մը զրկուեցաւ Դատական նախարարութեան տեղապահ ընտրութեան համար: — Շէյխ Իլ Իսլամը Եաֆայի Երուսաղէմ պատկան չէլքո պարպելու և աճուրդի հանելու գործողութիւնը դադարեցնել հրամայեց վաս զի Երուսաղէմայ միարանութիւնը յաջողեցաւ կալուածաթուղթներու մասնագիտական քննութեամբ մը ապացուցանել թէ մահլիս համարուածը այդ չէլքո չէ և տեղային դատարանը սիւայ վճիտ տուած է: — Սարբերդէ, Տիգրանակերտ և Պիթիսէ Հայկական զբկանքներու տխուր տեղեկագիրներ հասան Պատրիարքարան: Վարդոյի ժողովուրդը վարժարանի մը շինութեան յատկացնել կ'ուզէ նոր նախիջեւանցի Տիկին Թագուհի Յարութիւնեանի կուսկը: Չէյթուի փոխ առաջնորդն ալ իր 200 ոսկի կը խնդրէ տեղուոյն ազգական կիսաւարտ վարժարանը լմոյնելու համար: — Բղիթի մէջ այս տարի Հայ երկրորդ կարգի 28 ընտրող ընտրուած է Բողդէմ Թուրք և Բուրք 30 ընտրողի, մինչդեռ 1908ին կային Հայ 8 և Թուրք 12, Իգմիթի և չըջակայից համար ալ ընտրուած են 5 և 10, ամէնն ալ Մ. և Յ. կուսակցութեանէն, և Յոյն չկայ ընաւ: — Դաշնակցականներու դատը Ռուս Ծերակոյտի մասնաւոր առեւտրին առջև վերջ գտած է ամսոյս 19ին և անմիջապէս սկսած են պաշտպանողական ճանաչուելու: Բանի մը ամբաստանեալներու վերագրուած յանցանքներ անհիմն դատուած են:



اوه داپر هفتلى غزته — درسعادنده بايل هاوسده — مدير مسئول — صمويل ق. هاروتيويان

ՊԱՏՄԱՆՆԵՐ	
Տարեկ. բժշկութիւն	40 ԴՏ.
Ամերիկայի համար	2 Տու.
Անգլիայի ..	8 ինչի
Ուրիշ երբ-	
կերպերու ..	10 Տր.
Ձեռքի համար	40 Ժամբ
Մանուցման գրքերը չափաւոր	

Ա Ի Ե Տ Ա Բ Ե ր

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Խմբագիր Հ. Ս. Պարբեր

Պայտըլ Հասու,

Կ. պոլիս, Թուրքիա

THE AVEDAPER

AN ARMENIAN WEEKLY

EDITOR H. S. BARNUM

American Bible House  
Cons/ple, Turkey

TERMS

An. Subscrip.	Pr. 40
U. S. A.	\$ 2
England	Shils. 8
Other countries	Fr. 10

Single Copy 40 Paras

Advertising rates on application

ԱԶԳԵՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Մանկագրատիպանուհիներ պատրաստելու համար մասնաւոր դասընթացք մը պիտի սկսի Տրամպիզոնի մէջ, 1912, Սեպ. 3/16ին:

Գիշերօթիկներու տարեթոշակն է 15 Օսմ. ոսկի, Աւելի տեղեկութեանց համար դիմել առ

Miss N. A. Cole,

American Mission,

4-13

TREBIZOND.

Մարզուանի Հայ Աւետաց բեմին համար ձեռնհաս պաշտօնեայ մը կը փնտռուի: Արդ կը խընդրուի որ տրամադրուած քարոզիչներ կամ երէցներ բարեհաճին բանակցել ստորագրեալիս հետ, Յակոբ Պետրոսեան, Սարկապ, Մարզուան: 3-5

مرزيفونده آغوب بدروسيان

ԴԱՍՏԱՏՈՒՆԵՐ ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻՆ. — Մասնագէտ Հայերէնի, Մասնագէտ Թրքերէնի, Մասնագէտ Ֆրանսերէնի, Մարմնամարզի դասատու. Դիմել Խմբագրութեանս: 3-3

ՄԵԶԻ ՂՐԿՈՒԱԾ ԳԻՐԻՔ

ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Հատոր Բ., Հոռովմայեցիք և նախամիջնադար: Բարձրագոյն դասընթացք պատկերազարդ և խնամեալ հրատարակութիւն: Էջ 224, Գին 8.20 դր.: Հեղինակը, Փրոֆ. Յովհ. Յակոբեան, պէտք չունի ծանօթացուելու անոնց որ արդէն տեսած են իր առաջին հատորը և Գաղաքացիական կրթութիւն անուն գործը:

ՄՐԱՍՁԱՆ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ, (Տճական Բերնուանի) Գր. Հ. Գալուստեանի: 35 գեղեցիկ քերթուածներ, մաքուր տպագրութեամբ: Էջ 64, Գին 4 դր.: Դիմել հեղինակին, Աւետարանի Խմբագրութեան հասցէով:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ Ի ՊՐՈՒՍԱ

Թէհրան Վեր. Մ. Տամպուրաճեան փ. օրց. 432. Թարսուս Վեր Պ. Թօփալեան փ. օրց. 378. Պոլիս Յ. Յարէկեան էֆ. փ. օրց. 108, Գ. Շահպազեան էֆ. 20, Մ. Թաղէսեան էֆ. փ. օրց. 40, Վաճառու՛մէ 16. Կարին Ա. Կարապետեան էֆ. փ. օրց. 172. Մանիսա Պատ. Յ. Մինասեան փ. օրց. 30. Աղեքսանդրիա Վեր. Բ. Ս. Ճէճիգեան 180, այսինքն իր նուէր 20, Ե. Ինճէճիկեան էֆ. 2, Ա. Տիչչէքէնեան էֆ. 10, Մ. Խունկանեան էֆ. 5, Բ. Խունկանեան էֆ. 5, Կ. Չորլեան էֆ. 5, Ա. Գ. 4, Տիկ. Լ. Չորլեան 5, Տիկ. Մ. Գայաեան 5, Տիկ. Մ. Թիւսիւզեան 10, Տիկ. Վ. Տիչչէքէնեան 5, Տիկ. Ս. Թաշճեան 5 և Մ. Հէլվաճեան էֆ. 5: Արապկիր Պատ. Ս. Մ. Գրալեան փ. օրց. 150 և 84 բրկմ. 420. Բերի Վեր. Ա. Նիկողոսեան փ. օրց. և 42 բրկմ. 216, Արարկիրի և Բերիի մանրամասնութիւնք ուրիշ պատեհութեամբ կը հրատարակենք: Նշան էֆ. Մ. Թէհլէրեան Բահովա 10 ֆր., Վարդապետեան եղբք. Ղապաց 5 ֆր., Մարգար էֆ. Չանիկեան կրակուեվաց 2 ֆր., Ասատուրեան եղբք. Օպէրնօվաց 2 ֆր., Թէհլէրեան որդիք և եղբարք, Վալէֆօ, 31 ֆր. գումար 50 ֆր.:

Գ. ՊԱՂՏԱՍԵԱՆ

Հոգեւոր պաշտամունք վաղը, Ժամը 2.30ին (Ը. Ե.), Կոստիկեան բնակարանի մէջ, Պոյաճըզիւղ Պիտի խօսի Պատ. Բ. Պետրոսեան:

Կ. Պոլսոյ Ե. Բ. Ընկերակցութեան Աղօթքի Ժողով, Ժամ 3.45ին (Ը. Ե.), Գումգափու, Միշն Հաուսի մէջ: Պիտի խօսի Ընկեան անդամներէն Տիար Յակոբ Կարմիրեան, որ վերջերս դարձաւ մայրաքաղաքս: